5 ՄԱՅԻՍ 2011 ՀԻՆԳՇԱԲԹԻ 80(4699)

# Ազգ
Azg

ISSN: 1829-1651

## Ժխտողականությունը պատժելու օրինագիծը մերժվեց

Երեկ, 3 ժամ տեւած քննարկումներից ու ելույթներից հետո, որտեղ վճռական եղավ երկրի արդարադատության եւ ազատությունների նախարար **Միշել Մերսիեի** ելույթը, որ ընդունելով հանդերձ Հայոց ցեղասպանության փաստը, քվեարկության ներկայացված բանաձեւը համարեց հակօրենսդրական եւ կարծիքի ազատությունը սահմանափակող, Ֆրանսիայի Սենատը 196 դեմ եւ 74 կողմ ձայներով մերժեց Հայոց ցեղասպանության ժխտումը պատժելի նկատող օրինագիծը:

Այնինչ, դեռեւս 2006-ի հոկտեմբերի 12-ին Ֆրանսիայի Ազգային ժողովը ընդունել էր Հայոց ցեղասպանության ժխտումը քրեապես պատժելի համարող օրինագիծ, բայց իշխանությունների միջամտության հետեւանքով Սենատում համանման օրինագիծ այդպես էլ չընդունվեց: 2010-ի հուլիսին սոցիալիստ սենատորները առաջարկեցին Հայոց ցեղասպանության ժխտումը Ֆրանսիայում քրեապես պատժելի համարվող նոր օրինագիծ: Ի վերջո որոշվեց Սենատում այն քվեարկության դնել 2011-ի մայիսի 4-ին: Օրինագիծը կոչված էր ընդլայնելու մամուլի ազատությանը վերաբերող 1881 թ. օրենքի կիրառության ոլորտը, ինչը թույլ կտար հրեաների Ողջակիզման ժխտումը պատժող 1990 թ. Գայսոյի օրենքը կիրառել նաեւ Հայոց ցեղասպանությունը ժխտելու փորձերի դեմ:

Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների եւ հայամետ գործիչների նախաձեռնությամբ երեկ Փարիզի ժամանակով ժամը 14-ից բազմամարդ հանրահավաք էր անցկացվում Սենատի շենքի առջեւ: Օրինագիծն ընդունելու եւ վերջապես արդարություն հաստատելու կոչերով նախապես սենատորներին էին դիմել Շառլ Ազնավուրը, Փարիզի քաղաքապետ Բերտրան Դըլանոեն, հայտնի փիլիսոփա **Բեռնար-Անրի Լեւին** եւ ուրիշներ: «Լիբերասիոն» թերթը հրապարակել է Շառլ Ազնավուրի դիմումը, որտեղ մասնավորապես ասվում է. «Ոչ ոք չկարողացավ կասեցնել Արեւմտահայաստանի քաղաքակրթության ոչնչացման մեխանիզմը: Սկսվել էր Առաջին աշխարհամարտը: Եկեք խաղաղ պայմաններում ժխտումը կասեցնելու միջոցներ ձեռնարկենք»:



Բերտրան Դըլանոեն իր դիմումի մեջ նշում է, որ «Նիկոլա Սարկոզին դրժեց իր խոստումը: 2007-ի ապրիլի 24-ին նախագահության թեկնածու Սարկոզին հայկական միություններին հղած բաց նամակում խոստացավ Սենատում օժանդակել 2006-ի օրենքի վավերացմանը, խարազանեց Անկարայի «պետական ժխտողականությունը»: Բայց ընտրվելուց հետո սկսեց խոստումներ տալ Թուրքիայի կառավարությանը...»: Պ. Ք.

## «Յուրաքանչյուր հակամարտություն պետք է լուծվի միայն խաղաղ ուղիով»

*ԵԱՀԿ նախագահող Լիտվայի նախագահի «հստակ ուղերձը»՝ Երեւանին, Բաքվին եւ Թբիլիսիին*




Հ. ԱՓՅԱՆ

ԵԱՀԿ-ում նախագահությունը ստանձնած Լիտվայի նախագահ Դալյա Գրիբաուսկայտեն վերջին օրերին Բաքու եւ Թբիլիսի այցելելուց հետո երեկ ժամանեց Երեւան: Հայաստանի նախագահի նստավայրում երկկողմ հանդիպումից հետո երկու նախագահները հանդես եկան ամփոփիչ հայտարարություններով: «Մեզ համար շատ կարեւոր է Հայաստանը՝ որպես կայունացնող գործոն», այսպես սկսեց իր խոսքը Լիտվայի նախագահը: Անդրադառնալով հարավկովկասյան հակամարտություններին՝ տիկին Գրիբաուսկայտեն ընդգծեց. «ԵԱՀԿ-ի հիմնական նպատակն է, որ յուրաքանչյուր հակամարտություն լուծվի միայն խաղաղ ճանապարհով: Որեւէ միջազգային կառույց երբեւիցե չի սատարի ռազմական լուծմանը: Հենց սա է եղել իմ հստակ ուղերձը վերջին օրերին այցելած երեք երկրներին»: Տիկին Գրիբաուսկայտեն կարեւորեց նաեւ հանգամանքը, որ «չնայած Հայաստանի պատմական անցյալին, ապրած ցավերին, հայ ժողովուրդը պատրաստ է խնդիրները լուծել խաղաղ ճանապարհով»:

Տես էջ 2

## Ադրբեջանի կեղծարարության արժանի հակահարված պետք է տրվի

Պաշտպանության նախարարությունը հանդես է եկել գովելի նախաձեռնությամբ՝ կազմակերպելով «Պատմություն եւ մշակույթ. ընդդեմ կեղծիքի եւ ոտնձգության» եռօրյա գիտաժողովը, որի տարբեր նիստեր ընթանում են տարբեր հաստատություններում՝ նպատակ ունենալով քարոզչական առումով հակահարված տալու ադրբեջանական խեղաթյուրումներին պատմության եւ մշակույթի ոլորտում: Երեկվանից սկսված նիստերը տեղի են ունենում պաշտպանության նախարարությունում, ԵՊՀ-ում, Խ. Աբովյանի անվան մանկավարժական համալսարանում, բացի տվյալ հաստատությունների ներկայացուցիչներից՝ մասնակից են Գիտությունների ազգային ակադեմիան, մշակույթի նախարարության պատմամշակութային արգելոց-թանգարանների եւ պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը, Կովկասի ինստիտուտ-հիմնադրամը, հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող կենտրոնը:

Քանի որ պաշտպանության նախարարությունում տեղի ունեցած նիստին «**Ազգը**» հրավիրված չէր, ստիպված օգտվում ենք նախարարության կայքի սուղ լրատվությունից, ըստ որի նիստին մասնակցում են պատմության եւ մշակույթի ոլորտի անվանի գործիչներ, գիտնականներ, բուհերի ռեկտորներ, իսկ գիտաժողովը կազմակերպվել է պաշտպանության նախարարին առընթեր հասարակական խորհրդի նախաձեռնությամբ:

Հասարակական խորհրդի նախագահ **Գեղամ Հարությունյանի** բացման խոսքից հետո ողջույնի խոսքով հանդես են եկել պաշտպանության, կրթության եւ գիտության, մշակույթի նախարարները, Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահը եւ ԵՊՀ ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը:

Կարեւորելով գիտաժողովի կազմակերպումը՝ պաշտպանության նախարար **Սեյրան Օհանյանը** մասնավորապես ասել է. «Հայկական գիտական միտքը պետք է իր հստակ մոտեցումներն ունենա ու արտահայտի պատմության եւ մշակույթի ադրբեջանական կեղծարարությունների վերաբերյալ»:

Տես էջ 2

## Մահափորձ՝ Էրդողանի՞ դեմ

**Ինչպես տեղեկացնում է BBC-ին՝ Թուրքիայի հյուսիսային մասում անհայտ անձինք գնդակոծել են ոստիկանական ավտոբուս. սպանվել է իրավապահ մարմինների մի աշխատակից: Հատկանշական է, որ պատահարից մի քանի ժամ առաջ Կաստոմոնա քաղաքում ընտրողների հետ հանդիպում էր ունեցել վարչապետ Թայիփ Էրդողանը: Այն պահին, երբ ավտոբուսի վրա հարձակվել են, Էրդողանը ուղղաթիռով հեռացվել է քաղաքից: Ուշագրավ է նաեւ, որ գնդակոծված ոստիկանական մեքենան ուղեկցում էր իշխող կուսակցության պատվիրակների ավտոբուսը:**

**Հիշեցնենք՝ այժմ Թուրքիայում նախընտրական քարոզարշավ է ընթանում: Խորհրդարանական ընտրությունները հարեւան երկրում կանցկացվեն հունիսի 12-ին:**

Հ. Ա.

## Կենսաթոշակների չափը չի ավելանա, փոխարենը կլուծվեն համակարգի խնդիրները

Ի լուր կենսաթոշակառուների աշխատանքի ու սոցիալական հարցերի փոխնախարար **Արտեմ Ասատրյանը** տեղեկացնում է, որ այսուհետեւ ամբողջ հանրապետությունում կենսաթոշակները վճարվելու են ամսվա երկրորդ աշխատանքային օրվանից: Իսկ կենսաթոշակների չափի բարձրացում, ըստ նրա, առայժմ չի նախատեսվում: Վերջին անգամ թոշակների բարձրացում եղել է անցյալ տարվա նոյեմբերին, երբ քաղաքացիները թանկացումների նոր ալիքին դեռ չէին հանդիպել: Երեկ լրագրողների հետ հանդիպման ժամանակ փոխնախարարը նշեց, որ 2011 թվականի բյուջեով կենսաթոշակի բարձրացում չի նախատեսվում, հետեւաբար նման հարց այս պահին չի քննարկվում: Աշխատանքի ու սոցիալական հարցերի նախարարությունում այնուհետեւ անդրադառնալով ասուլիսի գլխավոր թեմային, որը վերաբերում էր կենսաթոշակային համակարգում իրականացվող բարեփոխումներին, փոխնախարարն ասաց, որ դրանք այս տարի եւս շարունակվելու են. «Ներկայումս մշակվող միասնական տեղեկատվական բազայի միջոցով լուծում կստանան կենսաթոշակային համակարգի մի շարք խնդիրներ»: Սակայն մինչ նոր բազայի գլուխ գալը, խնդիրները լուծելու ուղղությամբ աշխատանքներ կատարվել են նաեւ այսօրվա բազայի շրջանակներում, օրինակ՝ շուրջ 3000 հոգու տվյալներ չեն ընդգրկվել մայիս ամսվա վճարման ցուցակներում, քանի որ այդ անձինք չեն իդենտիֆիկացվել: Բացի դրանից՝ մայիս ամսվա վճարման ցուցակներում ներառված շուրջ 37000 տվյալներ վճարումների ընթացքում դեռ պետք է ճշգրտվեն: «Այդ քաղաքացիները մայիսին կենսաթոշակ կստանան միայն տվյալները ճշգրտելուց հետո», ավելացրեց պարոն Ասատրյանը:

Ի. Պ.

## Սպանությունները տարածաշրջանում ժողովրդավարություն հաստատելու միջոց չեն

*Սիրիական բանակը՝ ի տարբերություն եգիպտականի, հազիվ թե վերահսկելի դառնա Արեւմուտքի համար*

Մայիսի 1-ի լույս գիշերը ՆԱՏՕ-ի օդուժի հարվածից Տրիպոլիում սպանվեցին Լիբիայի նախագահ Մուամմադ Քադդաֆիի կրտսեր որդին եւ 3 թոռները: Մայիսի 2-ին Պակիստանի մայրաքաղաք Իսլամաբադից ոչ հեռու Աբբոթաբադում ամերիկյան հատուկ նշանակության ջոկատը, Վաշինգտոնի վկայությամբ, ոչնչացրեց «Ալ Ղաիդայի» առաջնորդ Ուսամա բեն Լադենին: Թեեւ թալիբները կասկածանքով են վերաբերվում բեն Լադենի սպանության մասին Վաշինգտոնի պաշտոնական հաղորդագրությանը, սակայն աշխարհի թիվ 1 ահաբեկիչը ԱՄՆ-ին արդեն տվել է ահաբեկչության դեմ գլոբալ պայքար ծավալելու եւ դրանով միջազգային ահաբեկչությունն օրինականացնելու, Աֆղանստանի հետ նաեւ Իրաքի դեմ պատերազմներ սանձազերծելու, ինչպես նաեւ ժողովրդավարության քողի տակ Հյուսիսային Աֆրիկայի եւ տարածաշրջանի արաբական երկրներին իր հայեցողությամբ վերակառուցելու փորձեր կատարելու, իսկ Իրանին մշտապես ռազմական ներխուժման սպառնալիքի տակ պահելու լայն հնարավորություններ:

Այսինքն՝ Ուսամա բեն Լադենին թիվ 1 ահաբեկիչ է դարձրել Մ. Նահանգները, եթե նույնիսկ սպանված էլ չլինի, նա կատարել է ակնկալվող առաջադրանքները՝ «Ալ Ղաիդայի» մասին դեռեւս վաղ է հետեւություն անելը: Չի բացառվում, որ այս կազմակերպությունը օգտագործվի արաբական երկրներում ծայր առած, սակայն նպատակին դեռեւս չծառայող համաժողովրդական այսպես կոչված խռովությունները վերջնական արդյունքի հասցնելու համար իհարկե ամերիկյան չափանիշներով:

Այս կարգի խռովությունների պարագայում խնդիրը հանուն ժողովրդավարության պայքարը չէ, ոչ էլ սեփական բռնապետներից ազատվելը: Եթե այդպես լիներ, ապա Եգիպտոսը բանակի վրա հենվելով ավելի քան 30 տարի ղեկավարած Հոսնի Մուբարաքին չէր փոխարինի Զինվորականության բարձրագույն խորհուրդը: Եթե հնարավոր լիներ ՆԱՏՕ-ի ռմբակոծություններով ժողովրդավարություն հաստատել, ապա Լիբիան նախքան հակակառավարական ցույցերի դեռեւս համաժողովրդական շարժման վերածումը չէր ներքաշվի քաղաքացիական պատերազմի մեջ, կամ էլ Իրաքը վաղուց արդեն կդառնար օրինակելի ժողովրդավար երկիր տարածաշրջանում:

Տես էջ 5

# Ո՞ւմ է պետք դիպուկահարը, երբ պատերազմը դե յուրե դադարեցվել է

Մայիսի 4-ին, ԼՂՀ իշխանությունների հետ ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, ԵԱՀԿ առաքելությունը պլանային դիտարկում է անցկացրել ԼՂ-ի եւ Ադրբեջանի զինված ուժերի շփման գծում՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Թալիշ բնակավայրից դեպի հյուսիս: Դիտարկման ժամանակ կրակի դադարեցման ռեժիմի խախտումներ չեն արձանագրվել: Այս մասին տեղեկացնում է ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայությունը: Միեւնույն ժամանակ, հարեւան երկրի «Ազարբայջան» թերթին հարցազրույց է տվել Ադրբեջանի ՊՆ մամուլի քարտուղար Էլդար Սաբիրօղլուն: Ի դեպ, այս թերթի գլխավոր խմբագիրը միլիմեջլիսական Բախտիյար Սադիգովն է, այս հանգամանքը թերեւս վկայություն է, թե հատկապես ի՞նչ ուղղվածություն ունի ադրբեջանական վերոհիշյալ թերթը: Գնդապետ-լեյտենանտ Սաբիրօղլուն, հավատարիմ մնալով իր «ռազմական փորձագետի բարի անվանը», հիշյալ թերթում անդրադարձել է շփման գծի դիպուկահարների խնդրին: Միանգամից նշենք, որ Ադրբեջանի ՊՆ մամուլի քարտուղարի հայտարարությունը ուշագրավ է այն մասով, որ Բաքուն փաստորեն գիտակցում է, որ դիպուկահարներին առաջին գծից հանելուն դեմ է բացառապես ինքը: Հայկական կողմերը, ինչպես նաեւ միջնորդ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահությունը, անգամ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարը Բան Կի Մունը, բազմիցս են հայտարարել նրանց առաջին գծից հետ քաշելու անհրաժեշտության մասին: «Իսկ ԵԱՀԿ Մինսկի համանախագահները վստա՞հ են, որ դիպուկահարներին շփման գծից հեռացնելով իրավիճակը դրական ուղղությամբ կփոխվի կամ դրանով կլուծվի», նշել է Սաբիրօղլուն:

Անշուշտ, դիպուկահարներին առաջին գծից հանելով՝ իրավիճակը չի լուծվելու: Սակայն այդ քայլը էականորեն նվազեցնելու է առաջին գծում զոհվածների, միջադեպերի թիվը: Սա դրական քայլ չէ՞, կողմերի միջեւ փոխադարձ վստահության ամպրապնդմանը չի՞ նպաստելու, երկու երկրների հասարակություններում՝ շփման առաջին գծում տիրող իրավիճակի վերաբերյալ ունեցած անհանգստությունը չի՞ նվազեցնելու: Ի վերջո, մեծ հաշվով, հակամարտության վերջնական լուծմանը դեպի նշանակալից քայլ չէ՞: Մյուս կողմից էլ, ի՞նչ խնդիր են լուծում դիպուկահարները շփման գծում, երբ ակտիվ պատերազմական գործողությունները դե յուրե դադարեցված են: Պաշտպանակա՞ն՝ քիչ, ագրեսիվ-սադրիչ-հարձակողակա՞ն՝ այո: Ավելի պարզ ասած, եթե հակամարտ կողմերը պարտավորություն են ստանձնել դադարեցնել կրակը՝ մեկ, եւ չվերսկսել ռազմական գործողությունները՝ երկու, ի՞նչ իմաստ ունի դիպուկահարի ներկայությունը առաջին գծում: Հետեւաբար՝ նրանց առաջին գծից հանելու գաղափարին ընդդիմացողը, իսկ դա բացառապես Ադրբեջանն է, նաեւ ագրեսիայի, նոր պատերազմի հավանականությունը չբացառողն է, հիմնական սադրիչը, նախահարձակ կողմը, այսքան մեծ էներգետիկ նախաձեռնությունների կիզակետ տարածաշրջանում պատերազմի միակ վտանգը, եւ այսպես շարունակ: Այս ամենը ապացուցվում է Սաբիրօղլուի նույն հարցազրույցի այլ մասով:

Ադրբեջանի ՊՆ մամուլի քարտուղարը նշել է, թե «ԼՂ հակամարտության խաղաղ բանակցությունները արդեն սպառման փուլում են»: Ի՞նչ է սա նշանակում, ավելի ճիշտ՝ շանտաժ-ագրեսիայի վկայություն չէ՞ արդյոք: Այս վերջին հանգամանքը պետք է որ հասկանա, եթե դեռ չի հասկացել՝ «բոլոր հակամարտությունները պետք է լուծվեն բացառապես խաղաղ ճանապարհով» բարձրաձայնող միջազգային հանրությունը, այդ թվում, ի դեպ, Բաքվի «սիրելի մեջբերումների աղբյուր» ՄԱԿ-ը, որի կանոնադրության 1-ին գլխի 3-րդ կետը սահմանում է. «ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունները պարտավորվում են միջազգային հակամարտությունները լուծել բացառապես խաղաղ միջոցներով, որպեսզի չվտանգվեն միջազգային խաղաղությունը, անվտանգությունը եւ արդարությունը»: Թե որքանով կվտանգվի հատկապես միջազգային խաղաղությունն ու անվտանգությունը, եթե 1992-ի մարտի 2-ից ՄԱԿ-ի անդամ Ադրբեջանն անի այն, ինչ բարձրաձայնում է երբեմն, դժվար չէ կռահել: Ի դեպ, հետաքրքրական է նաեւ ՄԱԿ-ի կանոնադրության նույն գլխի հաջորդ կետը, ըստ որի՝ «ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունները պարտավոր են զերծ մնալ ուժի կիրառման հայտարարություններից...»: Ցավալի է միայն, որ ՄԱԿ-ի կանոնադրությունը չի սահմանում կամ հստակեցնում, թե ի՞նչ պատիժ է հասնում նրանց, որոնք պարբերաբար, առիթ-անառիթ անում են այդ հայտարարությունները: Դե, իսկ ադրբեջանցի համապատասխան պաշտոնյաները արդեն սովոր են, որ այն, ինչ գրված է թղթի վրա, անգամ իրենց համաձայնությամբ ու ստորագրությամբ, ամենեւին էլ պարտադիր չէ պահպանել:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

# Տեր-Պետրոսյանը երեկ այցելել է Սասուն Միքայելյանին, իսկ Նիկոլ Փաշինյանին կայցելի այսօր

ՀԱԿ-ի տարածած մամուլի հաղորդագրության համաձայն՝ երեկ ՀԱԿ առաջնորդ Լեւոն Տեր-Պետրոսյանն այցելել է քրեակատարողական վարչության հիվանդանոց եւ մեկ ժամ տեւողությամբ տեսակցություն ունեցել Սասուն Միքայելյանի հետ: Ըստ հաղորդագրության՝ Տեր-Պետրոսյանն այսօր կայցելի նաեւ Նիկոլ Փաշինյանին: Թե ինչո՞ւ մինչեւ այժմ Տեր-Պետրոսյանը չէր այցելում նրանց, չգիտենք, սակայն եթե ճիշտ են ՀԱԿ համակարգող Լեւոն Զուրաբյանի եւ այլոց հույսերը, որ Սասուն Միքայելյանն ու Նիկոլ Փաշինյանը ազատ կարձակվեն եւ մայիսի 31-ի հանրահավաքի մասնակիցները կդառնան, ապա առավել հավանական է, որ Տեր-Պետրոսյանը խնդիր է ունեցել պայմանավորվելու Փաշինյանի եւ Միքայելյանի հետագա պահվածքի առումով, որպեսզի հանրահավաքավորների մոտ ինքնագործունեություն չանեն: Տեսնենք, թե ի՞նչ արտահոսք կլինի այդ հանդիպումներից:

Մ. Խ.

ՆԻՍՏ, ԵԼՈՒՅԹ ԵՎ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

# Տեղի է ունեցել ԵՎՐՈՆԵՍԹ-ի հիմնադիր նիստը, որտեղ ելույթ է ունեցել Հայաստանի ԱԺ նախագահը

Մայիսի 3-ին մեկնարկած ԵՎՐՈՆԵՍԹ-ի խորհրդարանական վեհաժողովի հիմնադիր նիստին, ի թիվս արեւելյան գործընկեր երկրների խորհրդարանների ղեկավարների եւ ազգային պատվիրակությունների, նաեւ մասնակցում էր Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակությունը՝ **Հովիկ Աբրահամյանի** գլխավորությամբ: Ըստ ԱԺ հասարակայնության հետ կապերի վարչության՝ ողջույնի խոսքով հանդես եկած Եվրոպական խորհրդարանի նախագահ **Եժի Բուզեկի** խոսքից հետո ելույթ են ունեցել ԵՎՐՈՆԵՍԹ-ի խորհրդարանների ղեկավարները, ընդ որում՝ առաջինը ելույթ ունենալու հնարավորություն ունեցել է Հայաստանի ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանը: Նա նախ շնորհավորել է ներկաներին՝ նշանակալից իրադարձության առթիվ, նշելով ԵՎՐՈՆԵՍԹ-ի այն ինքնատիպությունը, որ արեւելյան գործընկերները ոչ թե անդամակցում են արդեն իսկ գոյություն ունեցող եվրոպական կառույցի, այլ իրենք են նման կառույցի հիմնադիրը դառնում. «ԵՎՐՈՆԵՍԹ-ի խորհրդարանական վեհաժողովը կլինի այն հարթակը, որը հնարավորություն կտա խորհրդարանական գնահատական տալ Արեւելյան գործընկերությանը եւ արտահայտել մեր հավատարմությունը միջազգային իրավունքի սկզբունքներին եւ հիմնարար արժեքներին, հասնել փոխվստահության մթնոլորտի ու տարածաշրջանային լիարժեք համագործակցության հաստատմանը: Այդ համատեքստում Եվրոպան իր բազմազանությամբ համերաշխության հաստատման լավագույն օրինակն է», ասել է Հ. Աբրահամյանը՝ հավելելով, թե Հայաստանը մեծ նշանակություն է տալիս նաեւ միջմշակութային երկխոսությանը տարածաշրջանում՝ տարբեր կրոնական ու էթնիկ համայնքների միջեւ վստահության եւ համագործակցության մթնոլորտի հաստատման միտումով. «Արեւելյան գործընկերության խորհրդարանական ձեւաչափը, մեր բոլորի համոզմամբ, այն ատյանն է, որի միջոցով մենք կարող ենք աջակցել Եվրոմիության Արեւելյան գործընկերության քաղաքականության իրականացմանը, արձանագրել առաջընթաց եւ կանխատեսել մարտահրավերները: Այն նաեւ յուրահատուկ ֆորում կդառնա տեղեկատվության եւ փորձի փոխանակման համար, կդյուրացնի փոխըմբռնումը, ընդհանուր դիրքորոշումների մշակումը Եվրոխորհրդարանի եւ գործընկեր պետությունների խորհրդարանների միջեւ»:

Հ. Աբրահամյանը նկատել է, որ Հայաստանի դավանած քրիստոնեական արժեքները, պատմական եւ լեզվամշակութային գործոններն ապահովում են մեր երկրի ներկայությունը Եվրոմիության հաստատությունում՝ կրկին վերահաստատելով Հայաստանի՝ եվրոպական մեծ ընտանիքի անբաժանելի մաս լինելու հանգամանքը, իսկ Եվրոմիության քաղաքացի մոտ մեկ միլիոն մեր հայրենակիցների ամբողջական ինտեգրումը Եվրոպայի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքին՝ դրա լավագույն ապացույցն է նկատել. «Այս առումով մենք կարեւորում ենք մեր քաղաքացիների համար Եվրոմիություն մուտքի արտոնագրերի տրամադրման դյուրացմանն ուղղված գործընթացը», ասել է նա՝ շեշտելով, որ դեռեւս մեկ տարի չի անցել այն օրվանից, երբ Հայաստանը Եվրոմիության հետ սկսեց Ասոցացման համաձայնագրի կնքման գործընթացը, եւ այժմ հաջողությամբ ավարտվել է բանակցությունների արդյունքում մշակված տասնվեց բաժին. «Եկեք օգտագործենք այս եզակի հնարավորությունը, որպեսզի արագացնենք այս գործընթացը, այլ ոչ թե փորձենք ԵՎՐՈՆԵՍԹ-ը դարձնել անիմաստ վիճաբանությունների բեմ: Ազնվորեն հավատացած եմ, որ ԵՎՐՈՆԵՍԹ-ի խնդիրներից է՝ ներգրավել Բելառուսին այս գործընթացում եւ փորձել խրախուսել հետագա բարեփոխումներն այդ երկրում, որպեսզի Բելառուսի պատվիրակությունը մոտ ապագայում զբաղեցնի ազատ պահված տեղերը»:

Ապա Հայաստանի Ազգային ժողովի նախագահը նիստի մասնակիցներին տեղեկացրել է, որ մեր Ազգային ժողովն արդեն ավարտում է նոր Ընտրական օրենսգրքի քննարկումները՝ համապատասխանեցնելով այն Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի եզրակացության մեջ պարունակվող առաջարկություններին, մեր երկրում արդեն ուժի մեջ է մտել «Խոսքի եւ հավաքների ազատության մասին» նոր օրենքը. «Ավարտելով ելույթս՝ ցանկանում եմ հստակ ընդգծել, որ ես ԵՎՐՈՆԵՍԹ-ի խորհրդարանական ձեւաչափը դիտարկում եմ ոչ թե որպես ինքնանպատակ կառույց, այլ համագործակցության կամուրջ, որը անցնելու վճռականությունը Հայաստանն ունի»:

Խորհրդարանների ղեկավարների ելույթներից հետո ստորագրվել է ԵՎՐՈՆԵՍԹ-ի խորհրդարանական վեհաժողովի հիմնադիր ակտը եւ ընդունվել է կանոնակարգը: ԵՎՐՈՆԵՍԹ-ի ԽՎ-ում ՀՀ ԱԺ պատվիրակության ղեկավար **Վահան Հովհաննիսյանը** ընտրվել է ԵՎՐՈՆԵՍԹ-ի ԽՎ-ի փոխնախագահ: Մ. Խ.

# Ադրբեջանի կեղծարարության արժանի...

1-ին էջից

Կրթության եւ գիտության նախարար **Արմեն Աշոտյանն** իր ելույթում նշել է. «Պատահական չէ, որ պատմության եւ մշակույթի հարցերը քննարկվում են հենց պաշտպանության նախարարությունում, քանի որ դրանք ազգային անվտանգությանը շաղկապված խնդիրներ են»: «Պանորամա» կայքն այլ մանրամասներ է հաղորդում նիստերից. Ա. Աշոտյանն, անդրադառնալով հարեւան երկրի պատմահենական դրսեւորումներին, ասել է. «Զավեշտալին այն է եւ կարծես ինձ հայտնի բացառիկ դեպքերից մեկն է, երբ պատերազմում պարտված կողմը փորձում է ինքը գրել պատմությունը: Սա մի կողմից նոնսենս է, մյուս կողմից լկտիության դրսեւորում, որոնք մենք ունենում ենք հարեւան երկրում, կարծում եմ, որ համարժեք հակահարվածի կարիք ունենք»:

ՀՀ մշակույթի նախարար **Հասմիկ Պողոսյանի** կարծիքով՝ այսօր մենք իսկապես խնդիր ունենք պաշտպանելու ինքներս մեզ, մեր ժառանգությունը, մեր մշակույթը եւ «այդ իմաստով ամբողջովին տեղափոխվել ենք ազգային անվտանգության դաշտ, եւ այդ դաշտը չի ճանաչում առանձին հետաքրքրություններ ու առանձին շահեր»:

Ըստ գիտաժողովի կազմակերպիչ, պաշտպանության նախարարին կից հասարակական խորհրդի նախագահ **Գեղամ Հարությունյանի**՝ Ադրբեջանից եկող սպառնալիքներից մեկը հենց քարոզչական պատերազմն է.

«Եթե սահմաններում մեր հարեւանները որոշակիորեն սահմանափակված եւ կաշկանդված են, ապա քարոզչական դաշտում նրանք լիովին տրվել են հակահայկականության անսանձ մոլուցքին», ասել է Գ. Հարությունյանը:

ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը շեշտել է, որ հաղթած լինելով պատերազմում՝ այսօր մենք պարտվում ենք մեր «հարեւաններին» քարոզչական պատերազմում, ադրբեջանցիները իրենց ավագ, թուրք եղբայրների օրինակին հետեւելով՝ յուրացնում են ոչ միայն մեր պատմությունն ու մշակույթը, այլեւ մյուս ազգությունների: Նախարար Սեյրան Օհանյանն էլ նկատել է, թե քննարկումների ընթացքում կմշակվեն մեթոդաբանություն եւ ռազմավարություն՝ նման իրողությունների դեմ մեր պայքարն իրականացնելու համար»:

Մ. Խ.

# «Յուրաքանչյուր հակամարտություն պետք է լուծվի միայն խաղաղ ուղիով»

1-ին էջից

Հայաստանի նախագահն իր լիտվացի գործընկերոջ հետ հանդիպումը գնահատելով «արդյունավետ եւ կառուցողական»՝ նշեց, որ ինքը կարեւորել է Բալթյան հանրապետությունների համագործակցության մոդելը. «Ափսոսանքով հայտնեցի, որ Հարավային Կովկասում գործնականում նման համագործակցությունը անհնար է՝ Ադրբեջանի կողմից տարածաշրջանում բաժանարար գծերը խորացնելու քաղաքականության պատճառով», ասաց Հայաստանի նախագահը՝ հավելելով. «Մենք պատրաստ ենք աշխատելու, պատրաստ ենք բանակցությունների, պատրաստ ենք եւ անհրաժեշտ ենք համարում փոխզիջումները: Բայց լուծման համար անհրաժեշտ է, որ Ադրբեջանն ունենա նույն ցանկությունը»: Վերահաստատելով հայկական կողմի դիրքորոշումը, որ հակամարտությունը լուծման միայն խաղաղ ճանապարհ կարող է ունենալ՝ նախագահ Սարգսյանը ընդգծեց. «Ադրբեջանը, սակայն, ընտրել է կարգավորումը ձգձգելու եւ իրեն հարմար ժամանակ ռազմական ավանտյուրայի դիմելու մարտավարությունը»:

Հայաստանի նախագահը բարձր գնահատեց ԵԱՀԿ-ում նախագահող Լիտվայի ջանքերը՝ ԼՂ հիմնահարցի կարգավորման ուղղությամբ: Սերժ Սարգսյանը ողջունեց խնդրի խաղաղ կարգավորման նպատակով «միջազգային հանրության, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ու անձամբ ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի ներդրած ջանքերը»:

Հայաստան-Լիտվա ամենաբարձր մակարդակի հանդիպմանը անդրադարձ է կատարվել նաեւ մեր երկրի եվրոինտեգրման ճանապարհին ունեցած դժվարություններին եւ հաջողություններին: Տիկին Գրիբաուսկայտեն նշեց, որ Լիտվան, որպես ԵՄ անդամ, պատրաստ է աջակցել Հայաստանին այնքան, «որքան դուք հարկ կհամարեք»:

Հայաստանի հետ երկկողմ քաղաքական հարաբերությունները Լիտվայի նախագահը գնահատեց «շատ բարձր մակարդակի»: Հայաստան-Լիտվա տնտեսական գործակցությանը, Գրիբաուսկայտեի խոսքերով, «դեռ պայծառ ապագա է սպասում». «Մենք պատրաստ ենք ձեր երկրում ներդրումներ կատարելու եւ սպասում ենք ձեր ակտիվությանը մեր երկրում», ասաց Լիտվայի նախագահը: Հայաստանի նախագահն ընդգծեց, որ երկկողմ հանդիպման ընթացքում Լիտվայի նախագահի հետ վերահաստատել են հայ-լիտվական հարաբերությունները խորացնելու փոխադարձ ցանկությունը: Լիտվայի՝ որպես նաեւ ԵԱՀԿ-ում նախագահող երկրի նախագահի հայաստանյան այցելության օրակարգի հաջորդ կետը վերաբերում է միջուկային էներգետիկային եւ այս ոլորտում անվտանգության ամրապնդմանը: Տիկին Գրիբաուսկայտեն տեղեկացրեց, որ ԵՄ նախաձեռնել է անցկացնել ատոմակայանների «սթրես-թեստեր»: Լիտվայի նախագահի խոսքերով՝ Հայաստանը պատրաստ է այս հարցում համագործակցության:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
**www.azg.am**

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221

Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
***Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*** / հեռ 529353

Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:

# Հայոց ցեղասպանության եւ Հոլոքոստի առանձնահատկությունները

Հոլոքոստի զոհերի հիշողության շաբաթվա շրջանակներում երեկ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտում պատմական գիտությունների դոկտոր **Հարություն Մարությանն** անդրադարձավ Հայոց ցեղասպանության եւ հրեական Հոլոքոստի հիշողության կառուցվածքային առանձնահատկություններին: Նրա գնահատմամբ՝ եթե հրեական Հոլոքոստի վերաբերյալ կան տասնյակ հետազոտություններ, ապա Հայոց ցեղասպանության մասին հետազոտություններն անհամեմատ քիչ են. հիմնական հետազոտություններն էլ կատարել են սփյուռքահայ հեղինակները, որոնք հարցին անդրադարձել են այլ խնդիրների համատեքստում: «Յուրաքանչյուր երեւույթի ընկալմանը մեծապես նպաստում է, թե հարցն ինչպես են մատուցում, ինչ մակարդակով ու հստակությամբ: Այդ առումով Հոլոքոստի պատմությունն ավելի ընկալելի է ներկայացված, քան Հայոց ցեղասպանությունը: Հոլոքոստը բաժանված է ժամանակահատվածների եւ այդպես էլ ներկայացված է ոչ միայն դասագրքերում, այլեւ թանգարաններում: Հայոց ցեղասպանության դեպքում, հատուկ ուսումնասիրության սկզբնական փուլում որպես ցեղասպանության տարեթիվ ընդունվել է 1915-1916 թթ.: Որոշ ժամանակ անց Հայոց ցեղասպանության տարեթվեր համարվեցին 1915-1923 թթ.: Հարց բարձրացվեց անգամ Հայոց ցեղասպանության հիմք անվանել 1894-1896 թթ. համիդյան կոտորածները: Նյութն առավել ընկալելի դարձնելու ու մատուցելու համար անհրաժեշտ է առանձնացնել ու բնութագրական որակումներով հստակեցնել Հայոց ցեղասպանության փուլերը», ասում է Մարությանը:

«Հոլոքոստի զոհերը հրեա ժողովուրդն են: Սա ընդունված տեսակետ է ողջ աշխարհում: Մինչդեռ հայերը, մինչեւ 1960-ականները, Հայոց ցեղասպանությունը ներկայացնելու համար որպես բնորոշում տալիս էին Մեծ Եղեռն արտահայտությունը: Եթե հրեական Հոլոքոստը համարժեք է ցեղասպանության ոլորտին առնչվող միջազգային իրավունքի տարրին, համաձայնություններին, ապա նույնը չի կարելի ասել Մեծ Եղեռն արտահայտության մասին, որը միջազգային իրավունքի բնագավառում ցեղասպանությանը համարժեք եզրույթ չի գնահատվում: Երբ ԱՄՆ նախագահ Բարաք Օբաման հայերին ուղղված ուղերձում օգտագործում է Մեծ Եղեռն եզրը, այն իրավաբանորեն համազոր չէ ցեղասպանություն հասկացությանն ու չի նպաստում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը»:

Հոլոքոստն ուսումնասիրող պատմաբաններն այն առանձնացնում են 20-րդ դարի մյուս ցեղասպանություններից՝ ներկայացնելով որպես բացառիկ երեւույթ, որը համադրելի չէ այլ ժողովուրդների ցեղասպանության հետ:

«Հիմնական փաստարկն այն է, որ հրեաներին չէին առաջարկում կամ ստիպում փոխել կրոնը՝ այդ կերպ փրկելով կյանքը: Մինչդեռ Հայոց ցեղասպանության պարագայում հաճախ է շեշտվում, որ հազարավոր հայեր փրկվել են՝ ընդունելով մահմեդականություն»: Հայ պատմաբաններն էլ Հայոց ցեղասպանության առանձնահատկությունները շեշտելիս ընդգծում են, որ այն դարասկզբի առաջին ցեղասպանությունն է, որի չդատապարտումը հիմք հանդիսացավ Հոլոքոստի իրականացման համար:

Շարունակելով ներկայացնել Հայոց ցեղասպանության եւ Հոլոքոստի հիշողության առանձնահատկությունները՝ Մարությանը հավելում է, որ պատմաբանները Հոլոքոստին էթնիկ շեշտադրում չեն տալիս, այլ նացիզմի, ռասիզմի եւ ֆաշիզմի համարժեք հասկացությունների մեջ ներկայացնում կատարվածը:

«Անցյալում տեղ գտած հակամարտությանը չեն հաղորդում էթնիկ որակումներ: Դրանք դիտարկում են որպես հանցագործ բնույթ ունեցող գաղափարախոսության գործունեության արդյունք: Մինչդեռ հայ քաղաքագիտական միտքը մեկ դար շարունակ Հայոց ցեղասպանության պարագայում շեշտում է այն իրագործողների էթնիկ միտքը: Շեշտադրումներն առավելապես ուղղորդված են ցեղասպանությունն իրականացնողների էթնիկ պատկանելությանը: Նման վիճակի համար պատասխանատու է նաեւ թուրքական ժխտողական քաղաքականությունը: Քանի դեռ ցեղասպանության փաստը ճանաչված չէ այն իրականացնող իրավահաջորդների կողմից, ցեղասպանությունը էթնիկ ոլորտից չի տեղափոխվել գաղափարախոսական դաշտ, հայերն ունենալու են «հավերժական թշնամիներ»»:

Մարությանն ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ վերջին տարիներին հատկապես երիտասարդության շրջանում կա տեսակետ, որ ցեղասպանությունը որոշակի ձեւախեղումներ է առաջացնում հայերի հոգեբանության մեջ: Ցեղասպանության մասին խոսելիս հատկապես շեշտվում է այն հանգամանքը, որ Օսմանյան կայսրության հազարավոր հայեր զանգվածաբար կոտորվել են, «առանց դիմադրության մորթվել ոչխարների նման»:

«Այս գաղափարի հաստատմանը մեծապես նպաստել է խորհրդային շրջանի հայ գրականությունը: Խորհրդային ղեկավարությունը չէր արգելում ցեղասպանության մասին խոսել, սակայն նպաստում էր, որ ցեղասպանության հիշողության մեջ հայերը ներկայացվեն որպես զոհեր»:

Հայ պատմաբաններն անդրադարձել են Վանի, Մուսալեռի, Շապին Գարահիսարայի, Ուրֆայի ինքնապաշտպանական մարտերին, սակայն չկան հիշատակություններ, որ հարյուրավոր գյուղերում հայերը դիմադրություն են ցույց տվել՝ փրկելով բազմաթիվ հայերի: «Որպես փաստեր նման դեպքերը նշվում են, սակայն փորձ չի արվել ներկայացնելու որպես որակական երեւույթ»:

Մարությանը փաստում է, որ ապրիլ ամսին հայկական ԶԼՄ-ներում գերիշխում է տխրությունն ու տառապանքը՝ անմեղ զոհեր, անպատիժ մեղավորներ, կորուսյալ հայրենիք: Մայիսին իրավիճակը փոխվում է, խոսվում է հաղթանակների ու քաջության մասին:

«Հայկական տոների ցանկում բացակայում է Վանի հերոսամարտին նվիրված տոնը, չենք հիշում, որ 27 օրվա ընթացքում փրկվել է 200.000 վասպուրականցի: Ազգային ժողովը պետք է ապրիլի 7-ը հայտարարի ինքնապաշտպանության օր: Սա կօգնի, որ հայերի մտածելակերպում ապրիլ ամիսը դառնա նաեւ պայքարի եւ ինքնապաշտպանության ամիս», ասում է Մարությանը՝ հավելելով, որ Հոլոքոստն ուսումնասիրող պատմաբանները մեծ ուշադրություն են դարձնում զինված դիմադրություններին. Հոլոքոստի հիշատակության օրն էլ պաշտոնապես կոչվում է Հոլոքոստի նահատակների ու հերոսների հիշատակի օր:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՅՑ ԵՎ ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

# Նալբանդյանն ընդունել է Ճապոնիայի փոխարտգործնախարարին

**Երեկ ԱԳ նախարար Էդվարդ Նալբանդյանն ընդունել է Երեւան ժամանած Ճապոնիայի արտգործնախարարի առաջին տեղակալ Հիսասի Տոկունագային: Այս մասին հայտնեցին ԱԳՆ մամուլի եւ տեղեկատվության վարչությունից:**

**Էդվարդ Նալբանդյանը խորին ցավակցություն է հայտնել մարտին Ճապոնիայում պատահած բնական աղետների հետեւանքով հազարավոր զոհերի կապակցությամբ: Փոխնախարար Տոկունագան երախտագիտություն է հայտնել մարտի 11-ին Ճապոնիայում տեղի ունեցած երկրաշարժի կապակցությամբ Հայաստանից ստացված ցավակցությունների եւ հետեւանքների վերացման համար ցուցաբերած օժանդակության համար: Նա հավելել է, որ ավերիչ երկրաշարժի հետեւանքներ վերապրած**



**հայ ժողովուրդը ճապոնական ժողովրդի վիշտն ընկալել է ինչպես իր սեփականը՝ եւ այս կապակցությամբ Երեւանում տեղի ունենալիք միջոցառումը՝ նվիրված աղետների զոհերի հիշատակին, հայ ժողովրդի բարեկամության հավաստումն է, եւ Ճապոնիան շատ բարձր են գնահատում դա: Նախարար Նալբանդյանը նշել է, որ վերջին տարիներին հայ-ճապոնական հարաբերությունները դինամիկ զարգացում են ապրում, ընդգծելով, որ Ճապոնիայի հետ փոխգործակցության զարգացումը Հայաստանի համար կարեւոր ուղղություն է: Հայաստանի արտգործնախարարին հանձնելով Ճապոնիայի ԱԳ նախարար Տակեակի Մացումոտոյի ուղերձը՝ հյուրն ասել է, որ Ճապոնիայի իշխանությունները բարձր են գնահատում Հայաստանի հետ բարեկամական հարաբերությունները եւ ցանկանում են առավել ընդլայնել դրանք: Նա հավելել է, որ իր այցելությունը դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր ճապոնական բարձրաստիճան պաշտոնյայի առաջին այցելությունն է եւ վկայում է վերջին շրջանում երկկողմ հարաբերությունների աննախադեպ զարգացման մասին: Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչության ղեկավարը գոհունակություն է հայտնել, որ շուրջ երկու տարի առաջ Տոկիո կատարած իր այցի ընթացքում ձեռք բերված մի շարք պայմանավորվածություններ իրականացվում են:**

**Ավելի ուշ Ճապոնիայի փոխարտգործնախարարին ընդունել է հանրապետության նախագահը:**

Հ. Ա.

# Հոգեհանգիստ Ճապոնիայի երկրաշարժի եւ ցունամիի զոհերի հիշատակին

**Նախագահ Սերժ Սարգսյանն այսօր մայրաքաղաքի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում ՀՀ բարձրաստիճան պաշտոնյաների, օտարերկրյա դիվանագետների եւ ճապոնական պատվիրակության հետ ներկա է գտնվել Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի նախագահությամբ կատարված հոգեհանգստյան արարողությանը՝ ի հիշատակ Ճապոնիայում տեղի ունեցած երկրաշարժի եւ ցունամիի զոհերի:**

ՀՀ նախագահի մամլո գրասենյակ

# Արմեն Արզումանյանն անհեթեթ է համարում Նոյի եւ Տիգրան Մեծի արձանների ապամոնտաժման մեկնաբանությունները

**Երեկվա մամուլում հրապարակումներ կային, թե նախագահի նստավայրի տարածքից ապամոնտաժվել են Նոյի եւ Տիգրան Մեծի արձանները այն մեկնաբանությամբ, թե հավանաբար նախագահ Սարգսյանն ուզում է ազատվել Քոչարյանի ժառանգությունից (արձանները նրա օրոք են տեղադրվել): Այս մեկնաբանություններին արձագանքել է նախագահ Սարգսյանի մամուլի խոսնակ Արմեն Արզումանյանը՝ դրանք անհեթեթ անվանելով. «Նախագահի աշխատակազմին հարող տարածքում իրականացվում են բարեկարգման աշխատանքներ, եւ մասնագետների խորհրդով արձանները կտեղադրվեն ՀՀ նախագահի աշխատակազմին հարող տարածքի մեկ այլ հատվածում», ասել է նախագահ Սարգսյանի խոսնակը:**

Մ. Խ.

# Դիմորդների թիվը կավելանա զորակոչից հետո

Երեկ Գնահատման եւ թեստավորման կենտրոնում տեղի ունեցավ ընդունելության քննություններին նվիրված մամուլի ասուլիս: Գնահատման եւ թեստավորման կենտրոնի մշակումների եւ կազմակերպական բաժնի պետ **Կարո Նասիբյանը** տեղեկացրեց, որ թեեւ դիմորդների թիվը կազմել է 1 209, ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը հիջեցրել է ընդունելության 20 928 տեղ՝ 2 428 անվճար, 18 500 վճարովի: Ստացվում է 1 209 դիմորդի համար տրվում է 2 428 տեղ անվճար:

Հարցին, թե ինչով է պայմանավորված այս փաստը, Գնահատման եւ թեստավորման կենտրոնի մշակումների եւ կազմակերպական բաժնի պետ Կարո Նասիբյանը պատասխանեց. «Մենք միայն քննություններն անցկացնողներն ենք»:

Այդ հարցի շուրջ մենք նաեւ հեռախոսազրույց ունեցանք ՀՀ կրթության եւ գիտության հասարակայնության հետ կապերի վարչության պետ **Արթուր Բաղդասարյանի** հետ, որը վստահեցրեց, որ տեղերը նախորդ տարվա համեմատ չեն կրճատվել եւ ակնկալվում է, որ դիմորդների թիվը կավելանա գարնանային զորակոչից հետո միջին մասնագիտականը ավարտած դիմորդների շնորհիվ, նաեւ նրանց շնորհիվ, ովքեր ցանկություն կունենան բարձրագույն կրթություն ստանալ:

ԳԹԿ-ն միասնական քննությունները կազմակերպում է երկու փուլով՝ հիմնական եւ լրացուցիչ: Հիմնական փուլի դիմում-հայտերը ավարտվել են ապրիլի 10-ին, իսկ լրացուցիչ փուլինը կտեւի հունիսի 24-ից հուլիսի 2-ը:

Ընդունելության կարգում կատարվել են փոփոխություններ՝ ՀՀ պետական 28 բուհերին եւ նրանց մասնաճյուղերին ավելացել են նաեւ ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ թվով 40: Նոր ընդունելության կարգով ոչ պետական բուհերի դիմորդները նույնպես պետք է միասնական քննություններ հանձնեն:

Ինչպես անցյալ տարի, այս տարի եւս անցողիկ բալը կհամարվի 7,5-ը:

Փոփոխություն է կատարվել նաեւ հանրապետական ընդունող հանձնաժողովում, ըստ որի՝ եթե նախկինում հանձնաժողովը բաղկացած էր 25 հոգուց, ապա այս տարի ընդգրկվելու են նաեւ ոչ պետական բուհերից երկու անդամ:

Դիմորդների թվի անկման պատ-



ճառով կլինի 11 միասնական քննական կենտրոն, 12-երորդը կլինի ԼՂՀ-ում: Քննությունները կվերահսկեն միայն ԳԹԿ-ի ներկայացուցիչները:

Դիմորդները իրենց հայտերը կարող են ներկայացնել բուհ մայիսի 5-ից մինչեւ հունիսի 1-ը, իսկ գարնանային զորակոչից զորացրված զինծառայողները եւ սփյուռքի դիմորդները՝ մինչեւ հուլիսի 10-ը:

Եթե կան ուսանողներ, ովքեր ցանկանում են փոխել բաժինը, մասնագիտությունը, կամ սովորում են հեռակա համակարգում, նրանք եւս կարող են մասնակցել այս տարվա ընդունելության քննություններին:

Վերջերս շոշափվող ամենատարածված լուրերի շուրջ զրուցեցինք Գնահատման եւ թեստավորման կենտրոնի մշակումների եւ կազմակերպական բաժնի պետ Կարո Նասիբյանի հետ:

**- Պրն Նասիբյան, այն լուրը, որ 2011-12թ. ընդունելության քննությունները լինելու է շտեմարանային սկզբունքով, արդյոք իրականությանը համապատասխանո՞ւմ է:**

- Մենք ՀՀ կրթության եւ գիտության նախարարության հետ համատեղ աշխատում ենք այդ ուղղությամբ, որպեսզի քննությունները անցկացվեն շտեմարանային սկզբունքով:

**- Լուրեր են տարածվել , որ 2012-13թ.թ. ընդունելության քննությունները տեղի են ունենալու մարտ-ապրիլ ամսիներին:**

- ԳԹԿ-ն երբեւէ նման հարց չի քննարկել: Քննությունները անցկացվում են դպրոցներում ու բուհերում, այսինքն այդ դեպքում կխաթարվի ուսումնական գործընթացը: Միանշանակ՝ նման բան լինել չի կարող:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

*Հ.Գ.- Հուրախություն լրագրողների, այս տարի կենտրոնացված քննություններին մասնակցելու համար հավատարմագրում չի լինելու: Միայն պետք է ներկայանալ բեյջերով:*

# Հայաստանի պատմության ադրբեջանական նենգափոխումը եւ գիտական ճշմարտությունը

1918 թ. մայիսի վերջերին Անդրկովկասի հարավարեւելյան, մերձկասպյան տարածքում հայտնվեց մի նոր կազմավորում, որը պայմանականորեն հորջորջվեց «Ադրբեջան»: Դա իր սեփական էթնազգային դիմապատկերը չունեցող մի վարչաքաղաքական միավոր էր, քոչվոր-անասնապահական այրում, ջեւանշիր, թարաքյամա, շամսէդդին, շահսեւան, կենգեռլու, իգիրմի դորդ եւ համանման այլ ցեղերի խառնիճաղանջ կոնգլոմերատ՝ ցեղային պատկանելության ցայտուն գիտակցությամբ, որը հանդես էր գալիս նաեւ «կովկասյան թաթարներ» ամորֆ անվանման տակ: Նա ի հայտ գալու իսկ առաջին օրվանից դրսեւորեց անհագուրդ ախորժակներ իր անմիջական հարեւան երկրների՝ Իրանի (Իրանական Ադրբեջան), Հայաստանի (Ղարաբաղ, Նախիջեւան, Զանգեզուր) եւ Վրաստանի (Սեինգիլո՝ Զաքաթալա, Կախի եւ Մառնեուլի) տարածքների նկատմամբ: Հետագայում նա նկրտումներ դրսեւորեց նաեւ Ռուսաստանի կովկասյան որոշ շրջանների նկատմամբ:

Ադրբեջան վարչաքաղաքական միավորը, բեռնավորված նման քաղաքական հավակնություններով, 1920 թ. հայտ ներկայացրեց նորաստեղծ Ազգերի լիգային անդամակցելու ցանկությամբ, կցելով մի քարտեզ, որտեղ Հայաստանի եւ Վրաստանի վերոնշյալ տարածքները ցույց էին տրված իբրեւ Ադրբեջանի տարածքներ: Ազգերի լիգայի ասամբլեան մերժեց ադրբեջանական դիմումը, գտնելով, որ նրա տարածքային վեճերը հարեւանների հետ «անհնար են դարձնում» նրա անդամակցությունը Ազգերի լիգային: Այսպիսով, միջազգային այդ ամենահեղինակավոր կազմակերպությունն ադրբեջանական նենգափոխների առաջին սերնդի դնչին հասցրեց առաջին ծանր հարվածը՝ մերժելով ադրբեջանական ագրեսորների «խնդրանքը»:

Բայց դա դաս չծառայեց նրանց: Ադրբեջանական կեղծարարների մի սերունդը հաջորդում էր մեկը մյուսին, Հայաստանի պատմության նենգափոխման հետ այդ գործընթացի մեջ ներգրավելով նորանոր ոլորտներ: Այդ գործընթացն իր գագաթնակետին հասավ Ադրբեջանի անկախության շրջանում, հատկապես նրա, որն ավելի շուտ միջնադարյան սուլթանություն, քան թե ժամանակակից պետական կազմավորում է հիշեցնում, երրորդ եւ չորրորդ պրեզիդենտների՝ Հեյդար Ալիեւի եւ նրա ժառանգորդ որդու՝ Իլհամ Ալիեւի կառավարության շրջանում, երբ Հայաստանի եւ հայ ժողովրդի պատմության նենգափոխումը Ադրբեջանում բարձրացվեց ազգային-պետական քաղաքականության մակարդակի:

Հասկանալի է, որ դա պահանջում է համապատասխան համակարգված հակազդեցություն հայ պատմագիտության եւ նրա հարակից գիտական ճյուղերի կողմից: Հենց այդ նպատակն է հետապնդում ՀՀ պաշտպանության նախարարության Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, որի «Աշխատանքային տետրերի» վերջին պրակը՝ «Ադրբեջանի կողմից Հայաստանի պատմության նենգափոխումներին գիտական հակազդեցության ռազմավարական ուղենիշները ՀՀ ազգային անվտանգության համատեքստում» խորագրի ներքո ամբողջությամբ նվիրված է այդ հիմնախնդրի լուսաբանությանը (Տե՛ս նո. 4/16, Երեւան, 2010): Հեղինակային կոլեկտիվը, բաղկացած 13 մասնագետներից, ինստիտուտի պետ, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), Ռազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, հակահաբեկչության գծով փորձագետ (ԱՄՆ), գեներալ-մայոր Հայկ Քոթանջյանի գլխավորությամբ, միանգամայն հիմնավորված կերպով ադրբեջանական նենգափոխությունը դիտարկում է սպառնալիք Հայաստանի ազգային անվտանգությանը եւ այդ տեսանկյունից է մոտեցել հիմնախնդիրների քննարկմանը:




Լրագրային հոդվածի շրջանակները, ցավոք, թույլ չեն տալիս անդրադառնալ բոլոր հոդվածներին եւ հանգամանորեն լուսաբանել սույն պրակում քննարկվող բոլոր հարցերը: Ուստի հարկադրված ենք անդրադառնալ միայն մի քանիսին:

Տեսական-հայեցակարգային բնույթ է կրում Հ. Քոթանջյանի «Ռազմավարական ուղենիշներ Հայաստանի պատմության նենգափոխման դեմ գիտական պայքարում՝ ցանցապետականության տեսանկյունից» հոդվածը: Հեղինակը գտնում է, որ Ադրբեջանի հակահայկական գործունեության հակազդեցությունը կարելի է կառուցել կամ ավանդական մենամարտի, կամ էլ համաշխարհային ընկերակցության մեջ հայության ցանցային ինտեգրվածության ռազմավարությամբ: Նա երկրորդ մոդելի կողմնակից է՝ Հայաստան-Սփյուռք հարաբերությունների ցանցապետական համակարգմանը, որն ինքնին վերցված նոր գաղափար է: Խիստ ուշագրավ է դոկտոր Հ. Քոթանջյանի այն դիտարկումը, որ «Գիտելիքների համաշխարհային համակարգի համար առանձնակի վտանգ է ներկայացնում պատմական գիտության նենգափոխումը պատմագրության մակարդակով»: Հենց դա է այժմ տեղի ունենում Ադրբեջանում: Միանգամայն տրամաբանական է հեղինակի եզրակացությունն առ այն, որ «Հայաստանի, ներառյալ Արցախը, տարածքի եւ հայ ժողովրդի պատմամշակութային ժառանգության նկատմամբ ցինիկության աստիճանի հասնող ադրբեջանական ոտնձգությունները հարեւան պետության ղեկավարի կողմից ուղղորդվող՝ Հարավային Կովկասում հայոց պետականության պատմության նենգափոխման արդյունք են»: Այս կապակցությամբ անհրաժեշտ է հիշեցնել արաբ միջնադարյան պատմաբան Իբն Խալդունի (1332-1406) հայտնաբերած եւ պատմագիտության կողմից ընդունված քոչվոր անասնապահ ցեղերի եւ նստակյացների միջեւ կոնֆլիկտների վերաբերյալ օրինաչափությունը: Ադրբեջանի պետական, քաղաքական գործիչների եւ պատմաբանների Հայաստանի պատմության նենգափոխումների արդի քաղաքականության մեջ դժվար չէ նկատել միջնադարյան այդ ֆենոմենի ռեցիդիվը:

Սկզբունքային բնույթի մի շարք հետաքրքրական հարցեր են քննարկված «Հայաստանի պատմության նենգափոխման ադրբեջանական ռազմավարությունը եւ դրան հակազդելու ուղենիշները» հոդվածում, որի հեղինակներն են Պ. Չոբանյանը, Ա. Ավագյանը, Բ. Պողոսյանը, Վ. Տեր-Մաթեւոսյանը եւ Վ. Ավետիսյանը: Նրանք համոզիչ պատասխան են տվել այն հարցին, թե որո՞նք են ադրբեջանական կեղծարարությունների հիմնական պատճառները: Պատասխանելով այդ հարցին՝ հեղինակները գտնում են, որ «Ադրբեջանում դեռեւս ավարտված չեն ազգային ինքնության միասնական գիտակցության ձեւավորումը եւ միատարր ազգի կազմավորումը, որոնք Ադրբեջանում կրում են ոչ թե բնականոն, այլ արհեստականորեն, պարտադրվող բնույթ»: Շարունակելով իրենց քննական-վերլուծական մոտեցումը, հեղինակները մատնանշում են, որ ադրբեջանական «գաղափարախոսները» ադրբեջանական հասարակությունում ի դեմս հայերի ստեղծելով «թշնամու կերպար», ջանում են «նպաստել այդ գաղափարի շուրջը նրա համախմբմանը եւ դրանով իսկ լուծել պետության առջեւ ծառացած հիմնախնդիրները»: Անդրադառնալով Արեւելյան Հայաստանի նկատմամբ Ադրբեջանի հավակնություններին՝ հռչակելով այն որպես «Արեւմտյան Ադրբեջան», հեղինակները նշում են, որ «Ադրբեջանի պատմության արհեստական հնացմամբ» փորձ է արվում «ադրբեջանցիներին ներկայացնել որպես Հարավային Կովկասի բնիկ ժողովրդի», ինչը կատարյալ անհեթեթություն է: Հարավային Կովկասը երբեք նման բնիկներ չի ունեցել:

Ադրբեջանական նենգափոխումների ներքին ծալքերը եւ ենթաշերտերը բացահայտելու տեսանկյունից ընթերցողը շատ հետաքրքրական հարցեր կգտնի նաեւ Դ. Հովհաննիսյանի, Հ. Խառատյանի, Է. Աթանեսյանի, Մ. Հասրաթյանի, Լ. Երնջակյանի, Մ. Զոլյանի եւ Պ. Մուրադյանի հոդվածներում, որոնցում քննարկվում են ադրբեջանական նենգափոխումները հայ ճարտարապետության, երաժշտության, աղբյուրագիտության, Աղվանքի եւ Արցախի պատմության, պատմական հիշողության եւ հարակից այլ հարցերում, որոնք ներկայացված են աղբյուրագիտական հարուստ նյութի եւ տարաբնույթ աղբյուրների հիման վրա:

Մենագրական պրակում կա հանգամանալից անդրադարձ Ադրբեջանի չորրորդ պրեզիդենտ Իլհամ Ալիեւի դերի բացահայտմանը Հայաստանի պատմության նենգափոխման քաղաքականության մշակման եւ այդ քաղաքականությունը Ադրբեջանի պաշտոնական քաղաքականություն հռչակելու գործում: Այդ առումով նշվում է հատկապես 2005 թ. դեկտեմբերի 14-ի նրա ելույթը Ադրբեջանի գիտությունների ակադեմիայի 60-ամյակի առիթով տեղի ունեցած ժողովում, որտեղ նա օրը ցերեկով պատվիրեց ադրբեջանական գիտնականներին հիմնավորել այն փաստը, թե Ղարաբաղի հայությունը Լեռնային Ղարաբաղի նկատմամբ չունի պատմական իրավունքներ: Խոստանալով նրանց լավ վարձատրել, Իլհամ Ալիեւը նրանց գլխավոր խնդիրներից մեկը համարեց ապացուցել, որ «հայերն Ադրբեջանի անկապտելի մաս կազմող Լեռնային Ղարաբաղ են եկել որպես հյուրեր», ուրեմն եւ «բացարձակապես իրավունք չունեն պնդելու, թե անցյալում Լեռնային Ղարաբաղն իրենց է պատկանել»:

Մեր կարծիքով չպետք է թերագնահատել ադրբեջանական նենգափոխության հնարավոր վտանգները կամ նայել մատների արանքով: Անհրաժեշտ է դրա դեմ պայքարել համակարգված կերպով: Դա հնարավոր չէ միայն ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի ուժերով: Անհրաժեշտ է այդ պայքարում կոորդինացնել ՀՀ ԳԱԱ պրոֆիլային ինստիտուտների, Երեւանի պետական համալսարանի եւ մյուս բուհերի գիտնականների ջանքերը, օգտագործել գիտական այլ կենտրոնների եւ հաստատությունների ներուժը: Անհրաժեշտ է Հայաստանի ղեկավարության ամենալայն աջակցությունը, որովհետեւ դա ուղղակի առնչվում է Հայաստանի ազգային անվտանգության հիմնախնդիրներին:

Սույն պրակի հեղինակները կատարել են մեծ եւ շնորհակալ գործ: Նրանք սեղանի վրա են դրել գիտական լուրջ ուսումնասիրություն, որի ռուսերեն եւ անգլերեն թարգմանությունը հարկ է համարել հրատապ գործ:

**ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**
**Հայաստանի քաղաքագետների ասոցիացիայի խորհրդի անդամ,**
**ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ**

ՆԵՐԱԶԵՐԻԱԿԱՆ

# Եվս մի «գեներալ՝ գումարելի՞»

«Ով՝ ում» խնդիրն, ամենայն հավանականությամբ, ադրբեջանական բանակային վերնախավում գոյություն ունի: «Գումարելիների տեղափոխություն հանուն ինչի՞» անդրադարձում մենք նշել էինք, որ, ըստ Բաքվի որոշ լրատվամիջոցների, սպասվում է պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւի փոխարեն այդ պաշտոնում Իլհամ Ալիեւի ռազմական գլխավոր խորհրդատու Վահիդ Ալիեւի նշանակումը: Ասվել էր, որ վերջինս բանակում տեսչական շրջայց է կատարել եւ պաշտպանության նախարարի համար անցանկալի պատկերն անձամբ զեկուցել «գերագույնին»: Իհարկե, նաեւ զգուշացրել էինք, որ, հնարավոր է, այդ ամենն ընդամենը ընդդիմադիր մամուլի ասեկոսեներ են:

Այդուհանդերձ, բանակի թեման ադրբեջանական մամուլում նոր արծարծումներ է ունեցել, որոնցից ամենաուշագրավը «Ենի Մուսավաթ»-ի դիտարկումն է: Ըստ այդմ, Սաֆար Աբիեւն անցել է հակագրոհի եւ ձգտում է ամբողջ պատասխանատվությունը բարդել գլխավոր շտաբի պետ Նաջմեդին Սադիխովի վրա:

Առիթն այն է, որ հունվարյան զորակոչը «վրդովմունք է առաջացրել հասարակության մեջ»: Մի շարք ազդեցիկ պաշտոնյաների, մշակութային գործիչների զավակներ ծառայության են տեղաբաշխվել կամ Բաքվի, կամ մերձակա զորամասերում: Բանն այն է, որ, համաձայն պաշտպանության նախարարի հրամանի, զորակոչի հարցերը գլխավոր շտաբի սպաները պետք է կարգավորեն ոչ թե անձամբ, այլ ըստ համակարգչային ծրագրի:

Մինչդեռ, ինչպես պարզել է զորակոչի կազմակերպումն ստուգող հանձնաժողովը, ԳՇ-ի համակարգչային կենտրոնի «բաշխման տվյալներն իրականությանը չեն համապատասխանում»: Այսինքն, եթե համակարգիչը նորակոչիկին «տեղաբաշխել է» մի զորամաս, իրականում նա ծառայություն է տանում մյուսում, որը Բաքվին մոտ է կամ հենց տեղակայված է այնտեղ:

Այդ գործով արդեն իսկ որոշ շրջանների զինվորական կոմիսարներ ձերբակալվել են: Պաշտպանության նախարարը, սակայն, այն կարծիքին է, որ մեղավորը ոչ թե զինկոմիսարներն են, այլ գլխավոր շտաբի պետը: Սաֆար Աբիեւն իր իսկ ստեղծած հանձնաժողովի եզրակացությունը՝ կից զեկուցագրով հանդերձ, արդեն ուղարկել է Իլհամ Ալիեւին եւ «համեստորեն սպասում է գերագույն գլխավոր հրամանատարի որոշմանը»,- ըստ երեւույթին՝ թեթեւ իրոնիայով տեղեկացնում է «Մուսավաթ» ընդդիմադիր կուսակցության պաշտոնաթերթը, որ ավելի վաղ նաեւ գրել էր, որ իրենց առաջնորդ Իսա Ղամբարի որդուն «իշխանությունների հրահանգով թիկունքային զորամասից փոխադրել են առաջավոր գիծ»:

Աբիեւ- Սադիխով դիմակայության մասին տեղեկատվությանը կարելի էր վերաբերվել դարձյալ խիստ կասկածանքով, եթե «Ենի Մուսավաթն» իրեն հայտնի դարձած լարվածության շուրջը մեկնաբանություններ խնդրած չլիներ «ռազմական հեղինակավոր փորձագետ Ուզեիր Ջաֆարովից»:

Վերջինս, լինելով ադրբեջանական բանակի պաշտոնաթող փոխգնդապետ, հայտնի է ընդգծված իշխանամետ կեցվածքով: Ջաֆարովի այս կամ այն «կռահումները» սովորաբար համընկնում են պաշտոնական քարոզչության հնարանքներին: Այս իմաստով է, որ տվյալ դեպքում Աբիեւ-Սադիխով մրցապայքարի վերաբերյալ նրա դատողությունները որոշակի հետաքրքրություն ներկայացնում են:

Եվ այսպես, «անկախ փորձագետ» Ջաֆարովը հաստատել է թերթի ունեցած տեղեկությունները: Եվ նույնիսկ ավելի խորացրել. «Մենք կարծում էինք, որ հանրապետության զինդատախազությունը զորակոչի ժամանակ գլխավոր շտաբում տեղ գտած բացասական երեւույթների փաստերին ուշադրություն կդարձնի, գլխավոր շտաբի ղեկավարությանը եւ այդ թվում՝ Նաջմեդին Սադիխովի հովանավորյալ Էլխան Մաջիդովին պատասխանատվության կենթարկի, բայց դա տեղի չունեցավ: Անկախ այն բանից, թե դա ինչպես է եղել, փաստ է, որ պաշտպանության նախարարի եւ գլխավոր շտաբի պետի՝ զորակոչի հետ կապված հարցերի վերաբերյալ դիրքորոշումները խիստ տարբեր են», ասել է Ջաֆարովը եւ ավելացրել, որ «զինդատախազությունը, փաստորեն, գլխավոր շտաբի ապօրինի գործողությունների հանդեպ աչք է փակել»:

Ջաֆարովն ընդգծված բացասական է արտահայտվել գլխավոր շտաբի պետի հասցեին եւ ընդգծել, որ «նա նույնիսկ Ադրբեջանի պետական լեզվին չի տիրապետում, ռուսերեն ոչ մի բառ չիմացող զինվորներին ռուսերեն է հրամայում»: Թե ո՞ր օրվանից է, որ գլխավոր շտաբի պետը պիտի զինվորներին ուղղակի հրամայի, այդ մասին «ռազմական փորձագետ» Ջաֆարովն, իհարկե, ոչինչ չի ասում:

Աչքի է զարնում եւ այն, թե գլխավոր շտաբի պետն ինքնագլու՞խ է «խառնել համակարգչային ծրագիրը», թե՞ ինչ-որ մեկի ցուցումով: Բայց դա արդեն Ադրբեջանի «գերագույնի» խնդիրն է, թե ինչպես է կարգավորելու բանակային երկու «ղոչի»-ների հարցերը:

Եվ, այնուամենայնիվ, չի բացառված, որ բանակային վերնախավում «ծայր առած հակասությունների» թեման հենց «գերագույնի» իմացությամբ է այդքան հաճախակի շրջանառվում, ինչը բոլորովին այլ մտորումների առարկա կարող է լինել:

**ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ**

# Եթե նույնիսկ «հեղափոխության ու դեմոկրատիայի» դրոշները ավելի ու ավելի կանաչ երանգ են ստանում

Սիրիայի դեմ ՄԱԿ-ի բանաձեւի առնչությամբ Ռուսաստանի սկզբունքային բացասական դիրքորոշումը իհարկե ինքնաբուխ չէր, այլ՝ օրինաչափ: Սիրիան Լիբիա չէ, առավել եւս Մոսկվայի համար. երկու երկրների ստրատեգիական համագործակցությունը երկարամյա պատմություն ունի եւ ակունք է առնում տակավին խորհրդային ժամանակներից: Դամասկոսի հակաամերիկյան անհաշտ կեցվածքը համերաշխության հող է ստեղծում երկկողմ տարածաշրջանային եւ աշխարհաքաղաքական շատ ուղղություններում:

Այն, ինչ տեղի է ունենում Սիրիայում, չի կարող խորապես չանհանգստացնել ոչ մի հայրենասեր հայի: Այդ երկրում բնակվում է հոծ հայություն, որը վայելում է նրա ներկայիս ղեկավարության բարեհաճությունը: Ամեն մի բեկում հղի է անորոշությամբ, ո՞վ գիտե, ինչ ուժ կգա իշխանության գլուխ եւ ինչ դիրք կգրավի ազգային փոքրամասնությունների նկատմամբ:

Բնականաբար, ռուսաստանյան լրատվամիջոցները մեծ ուշադրություն են դարձնում սիրիական իրադարձություններին, եւ այդ թեմայով նյութերը առավելապես սիրիամետ են: Իրավիճակի արմատական ուրման նշան դարձավ ամերիկյան դիվանագիտական ներկայացուցչությունների աշխատակիցների մեծ մասի «հայրենադարձումը». ռուսների դիտարկումով, ամերիկացիները, ոչ բարի ավանդույթով, որպես կանոն այդպես են վարվում, երբ տվյալ երկրում սպասվում են լայնածավալ կազմալուծիչ իրադարձություններ: Ռուսաստանում մինչ այդ էլ սպասում էին, որ Սիրիան չի կարող անմասն մնալ արաբական հեղափոխությունների հորձանուտից: ԱՄՆ-ի ու հասկապես Իսրայելի համար Սիրիան արդեն երկար տարիներ անհաճո երկիր է՝ ինքնուրույն է, սերտորեն համագործակցում է Իրանի հետ, աջակցում է «Հզբոլլահին», պահանջներ է ներկայացնում Իսրայելին եւ այլն: Ի վերջո ամերիկյան լրատվամիջոցներում երեւացին հաղորդումներ, որոնց համաձայն սիրիական ընդդիմության հետ կապեր հաստատած ԱՄՆ-ի հատուկ ծառայությունները արդեն քննարկում են նրան համապատասխան օգնության ցույց տալու հարցերը: Այստեղ հատուկ նշում են, որ Սիրիայում փորձում է ավելի ակտիվ գործունեություն ծավալել իսրայելական հետախուզական գործակալությունը՝ «Մոսսադը»:

Ռուսները գտնում են, որ եթե չլիներ արտաքին քայքայիչ ներգործությունը, ընդդիմությունը հավանաբար կբավարարվեր կառավարության փոփոխումով ու արտակարգ դրության վերացումով: Սակայն թիկունքին զգալով Արեւմուտքի շնչառությունը՝ Բաշար Ասադի հակառակորդները նրա «դեմոկրատական» քայլերը գնահատեցին որպես թուլության դրսեւորում եւ հակագործողությունները նոր թափ ստացան:

Կոնգրես Սիրիայի նախագահ Բաշար Ասադին գահընկեց անելու հարցում այստեղ համակարծիք են, որ նրա անկումը հազիվ թե դրական բան տա ԱՄՆ-ին ու Իսրայելին: Ի վերջո Մուամմար Քադդաֆիին վերացնելու փորձերն արդեն ցույց տվեցին եվրոպացիների ու ամերիկացիների տարանջատվածությունն ու ՆԱՏՕ-ի դեգրադացիան, գրում են ռուսները: Քաղաքացիական պատերազմ հրահրելու դեպքում ո՞վ կարող է երաշխավորել, որ Ասադների կողմից նվաստացված սուննիական մեծամասնությունը չի փորձի վրեժխնդիր լինել ալավիներից, որոնց պատկանում է ներկայիս կառավարող վերնախավը: Արդեն ակնհայտ է, որ արաբական հեղափոխությունները ջուր լցրին առաջին հերթին իսլամական շարժման ջրաղացին, ինչը, ի դեպ, խիստ անհանգստացնում է նաեւ Ռուսաստանին: Եթե սկզբնական շրջանում իսլամիստները սոսկ ողջունում էին «դեմոկրատական» փոփոխությունները, ապա խորացող հակամարտությունների պայմաններում նրանք փորձ կանեն, ինչպես ասում են, ձուկ որսալ պղտոր ջրում: Ինչ-որ տեղ սթափվելով՝ Արեւմուտքը սկսել է սարսափած նայել մզկիթներում աղոթող տասնյակհազարավոր իսլամամետներին: Արեւմուտքի ակնհայտ կարճատեսության վկայությունը կլինի այն, որ, օրինակ, Եգիպտոսում իշխանության գլուխ գան «Մուսուլման եղբայրները», որոնք ձեւավորվելով որպես կուսակցություն, արդեն հավակնում են ընտրողների քվեների հիսուն տոկոսից ավելին: Թերեւս սա է պատճառներից մեկը, որ ամերիկացիները վճռական չեն Բաշար Ասադին պատժամիջոցների թիրախ դարձնելու հարցում:

Իմիջիայլոց, որոշ ռուս փորձագետների կարծիքով, «Մուսուլման եղբայրների» իշխանական հաղթարշավին սուբյեկտիվորեն նպաստում է Իսրայելը: Արդեն «հեղափոխականացված» երկրների հետ (Եգիպտոս, Թունիս եւ այլն) Իսրայելը, ի տարբերություն Սիրիայի, հաջողությամբ համագործակցում էր: Եվ աջակցելով անկոտրում թշնամու անկմանը, Իսրայելը մեծ հավանականությամբ ձեռք կբերի իր նկատմամբ շատ ավելի անողոք կրոնական-քաղաքական ուժ:

Ռուսները հատուկ ուշադրություն են դարձնում եւս մի պարագայի: Եթե Թուրքիան իր մուսուլմանական «խաղաղասեր միջնորդի» դերով մի կողմից կարող է ուժեղացնել ազդեցությունը տարածաշրջանում, ապա, մյուս կողմից, նա չի կարող չտագնապել Սիրիայի հնարավոր տրոհման հեռանկարից: Առանց այդ էլ վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը մռայլ կանխատեսումներ ուներ Հյուսիսային Աֆրիկայի եւ ողջ Մերձավոր Արեւելքի «իրաքացման» կամ «աֆղանացման» կապակցությամբ: Պարզ է, թե հենց միայն քրդական հարցի սրումը ինչ բարդությունների առջեւ կկանգնեցնի Անկարային:

Ռուսաստանում ընդհանուր առմամբ հոռետեսաբար են նայում աշխարհաշրջանում ԱՄՆ-ի կողմից վարվող քաղաքական կուրսի փոփոխմանը: Սկսված նախագահական ընտրությունների հենքի վրա հասկապես դժվար է սպասել զիջողական քայլեր Ամերիկայի կողմից երբեմնի սիրված «բռնապետների» նկատմամբ: Սպիտակ տան «համակրանքը» ցուցարարների շարասյուների կողմն է՝ «հեղափոխական ու դեմոկրատական» դրոշների ներքո, եթե նույնիսկ դրանք, հեգնում են ռուսները, գնալով ավելի ու ավելի կանաչ երանգն են ստանում: Սիրիայում էլ իսլամական շարժումը բազմերանգ է:

**ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**
**Մոսկվա**

# Սպանությունները տարածաշրջանում ժողովրդավարություն հաստատելու միջոց չեն

*1-ին էջից*

Խնդիրն, ի դեպ, խաղաղ ցուցարարներն էլ չեն, եթե լինեին, ապա Բահրեյնում ցուցարարների վրա կրակ բացած Սաուդյան Արաբիայի զորքերի նկատմամբ Արեւմուտքը լայնախոհ հանդուրժողականությամբ չէր վերաբերվի:

Քադդաֆիի որդու եւ թոռների սպանությունը, որքան էլ նա բռնապետ լինի, այնուամենայնիվ, ինքնիշխան պետության ղեկավարն է, պատերազմի հանցագործության երանգ կրող խայտառակություն է: Ավելի քան խայտառակություն պետք է համարել սպանությունից երկու օր հետո՝ մայիսի 3-ին Լիբիայի գծով ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Աբդուլլահ Էլահ Ալ Քաթիբի հայտարարությունը: Նա ասել է. «Ընդդիմությունը պահանջում է Քադդաֆիի հրաժարականը, իսկ վերջինս չի հրաժարվում: Կողմերի առաջադրած նախապայմանները անհնար են դարձրել զինադադարը»:

Քադդաֆիին հասցեագրված հրաժարականի պահանջների հետեւում, երկրից հեռանալու պայմանով, կանգնած են ԱՄՆ-ի գլխավորությամբ ՆԱՏՕ-ի երկրները, այդ թվում՝ ի դեմս վարչապետ Էրդողանի, նաեւ Թուրքիան: Եթե Քադդաֆին Հոսնի Մուբարաքի նման սոսկ բանակի վրա հենվեր, ապա նրանից չէին պահանջի հեռանալ երկրից, գուցեեւ կհանդուրժեին էլ: Սակայն Լիբիայում ամուր են աշիրաթական համակարգի դիրքերը, իսկ այս համակարգի վերահսկողությունն թերեւս իրատեսական չի թվում Արեւմուտքին: Բացի այդ, հիմքեր կան ենթադրելու, որ հենց Լիբիայում է կատարվում Սիրիայում նախատեսվող իշխանափոխության գլխավոր փորձը:

Համենայն դեպս, դիպուկահարներ կիրառելու տարբերակը, որոնք թիրախ են դարձնում սիրիական անվտանգության ուժերի մարտիկներին, աշխարհի առաջնակարգ լրատվամիջոցների հաղորդագրություններով միջազգային հանրությանը ապակողմնորոշելու միջոց, բացի Լիբիայից օգտագործվում է նաեւ Սիրիայում: Իսկ մայիսի 3-ին Ֆրանսիայի արտգործնախարար Ալեն Ժյուպեն, ջերմ ժողովրդավարի կեցվածք ընդունած, հայտարարում է. «Եթե սիրիական վարչակարգը շարունակի համառորեն ճնշել բնակչությանը, ապա այսօր կամ վաղը կտապալվի, չի կարելի բնակչության ժողովրդավարական բնույթի պահանջները լռեցնել մարտական փամփուշտներով»:

Ֆրանսիայի արտգործնախարարը այս խոսքերը դեռեւս սպառնալիք են: Բայց ներկա պահին Արեւմուտքի խնդիրը ոչ այնքան նախագահ Բաշար Ասադի տապալումն է, որքան Սիրիայի դուրսբերումը Իրան-«Հզբոլլահ»-«Համաս» առանցքից: Միաժամանակ Արեւմուտքին պետք է հայտնի լինի, որ սիրիական բանակը, ի տարբերություն եգիպտականի, նախագահ Ասադին հավատարիմ է մինչեւ վերջ, հետեւաբար ոչ վերահսկելի, եւ հազիվ թե տեղի տա ԱՄՆ-ի ու նրա արեւմտյան դաշնակիցների ճնշումներին:

**ՊԱՂԵՍՏԻՆ**

# Ստորագրվեց «Ֆաթհ»-«Համաս» հաշտության համաձայնագիր

**Պաղեստինյան «Ֆաթհ» եւ «Համաս» մրցակից շարժումները երեկ Կահիրեում ստորագրել են ազգային հաշտեցմանը եւ իշխանության ընդհանուր մարմինների ստեղծմանը վերաբերող համաձայնագիր: Այդ մասին հաղորդում է Ֆրանս-պրես գործակալությունը:**

**Ստորագրման արարողությանը մասնակցել են Պաղեստինյան ինքնավարության նախագահ Մահմուդ Աբբասը, «Համասի» քաղբյուրոյի ղեկավար Խալիդ Մաշալը, «Իսլամական ջիհադի» առաջնորդ Ռամադան Շալահը եւ ուրիշներ:**

**Համաձայնագրով նախատեսվում է անկուսակցական մասնագետներից կազմել «տեխնոկրատների կառավարություն», ինչպես նաեւ ստորագրման պահից մեկ տարվա ընթացքում անցկացնել խորհրդարանական ու նախագահական ընտրություններ:**

**Նախընտրական արշավին եւ բուն քվեարկությանը կհետեւի երկու շարժումների կազմած 12 հոգուց կազմված անկախ տրիբունալը:**

**Համաձայնագիրն անվտանգության ասպարեզում պահպանում է ստատուս քվոն. «Ֆաթհի» ստորաբաժանումները կվերահսկեն Այսրհորդանանը, «Համասը»՝ Գազայի հատվածը:**

**Համաձայնությունը ձեռք է բերվել Եգիպտոսի նոր իշխանությունների միջնորդությամբ:**

**Եգիպտոսը խոստանում է մոտ ժամանակներս ապրանքների եւ մարդկանց ազատ տեղաշարժի համար բացել Գազայի սահմանին գտնվող Ռաֆահի անցակետը: Վերջինս փակ է 2007-ից, երբ Գազայում իշխանությունն անցավ «Համասի» ձեռքը:**

**Իսրայելում զգուշավորությամբ են ընկալել պաղեստինյան շարժումների հաշտության լուրը: Իսրայելցի պաշտոնյաներից ոմանք զգուշացրել են, որ «Ֆաթհը» կարող է իրենց աչքին կորցնել օրինականությունը, եթե «Համասի» հետ կազմի ընդհանուր կառավարություն:**

# Ռումինիան հաստատել է կալանիչ հրթիռների տեղաբաշխման վայրը

**Ռումինիայի նախագահ Տրայան Բեսեսկուն հայտարարել է, որ երկրի տարածքում որոշված է հակահրթիռային պաշտպանության ամերիկյան համակարգի մասը կազմող**




**կալանիչ հրթիռների տեղաբաշխման վայրը: Այդ նպատակով կվերահանդերձավորվի Բուլղարիայի սահմանից ոչ հեռու՝ Դեւեսելու գյուղի մոտ գտնվող ավիաբազան:**

**Հակահրթիռային պաշտպանության ամերիկյան համակարգի տարրերի տեղաբաշխման վերաբերյալ սկզբունքային համաձայնություն էր ձեռք բերվել ավելի վաղ, նշում է BBC-ն: Այժմ որոշված է կալանիչ հրթիռների տեղաբաշխման կոնկրետ վայրը, որը մայրաքաղաք Բուխարեստից 200 կմ հեռու է: Սպիտակ տան ներկայացուցիչը նախկին ավիաբազայում արդեն հանդիպում է ունեցել նախագահ Բեսեսկուի հետ:**

**Նախագահի խոսքերով, ամերիկյան կալանիչ հրթիռների տեղաբաշխման վայրում սկզբնական շրջանում կլինի մոտ 200 զինծառայող, իսկ հետագայում նրանց թիվը կարելի է հասցնել 500-ի:**

**Նոր ռազմակայանի հրամանատարությունը կհանձնվի Ռումինիային, նշել է նախագահը, ընդգծելով, որ տվյալ օբյեկտն ունի բացառապես պաշտպանական նպատակներ եւ ուղղված չէ Ռուսաստանի դեմ:**

**Վաշինգտոնում նախապես ծրագրել էին կալանիչ հրթիռները տեղաբաշխել Լեհաստանում եւ Չեխիայում, բայց Մոսկվայի կտրուկ հակազդեցությունը ստիպել էր որոշ փոփոխություններ կատարել ծրագրում:**

# Բեն Լադենը կտակում զավակներին խնդրել է չմիանալ «Ալ Ղաիդային»

**Ուսամա բեն Լադենը իր կտակում զավակներին խնդրել է չմիանալ «Ալ Ղաիդա» միջազգային ահաբեկչական ցանցին, որի առաջնորդն էր ինքը մինչեւ սպանվելը (մայիսի լույս 2-ի գիշերը):**

**Աշխարհի «թիվ 1 ահաբեկչի» կտակը հրապարակվել է քուվեյթյան «Ալ Անբաա» թերթում: Վերջինիս լրագրողների պնդման համաձայն, կտակը գրվել է 2001-ի դեկտեմբերի 14-ին՝ սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից 3 ամիս անց, երբ ԱՄՆ հատուկ ծառայությունները սկսել էին որոնել բեն Լադենին:**

**Կտակում բեն Լադենն ափսոսանք է հայտնում, որ զավակների հետ քիչ է շփվել ջիհադին (սրբազան պատերազմին) իր նվիրվածության պատճառով: Նա նաեւ իր կանանց հրամայում է նորից չամուսնանալ:**

**Բեն Լադենը կտակում բերում է «Ալ Ղաիդայի» ահաբեկչությունների ցանկը: Մասնավորապես հիշատակվում են 1983-ին Լիբանանում ամերիկացի զինծառայողների ահաբեկումը, 1993-ին Սոմալիում ՄԱԿ-ի 19 խաղաղարարների սպանությունը, 1998-ին Նայրոբիում ԱՄՆ դեսպանատան պայթեցումը:**

**Համակարգչի վրա տպագրված 4-էջանոց փաստաթղթում բեն Լադենը կանխագուշակում է, որ ինքը սպանվելու է իր շրջապատի մարդկանց դավաճանության հետեւանքով:**

**«Ալ Անբաա» թերթի խմբագրությունը չի բացատրում, թե ինչպես է հայթայթել «թիվ 1 ահաբեկչի» կտակը եւ հաստատել դրա իսկությունը:**

# Հոգու ղողանջներ



Ասում են ժամանակը բուժում ու մոռացում է բերում, իսկ մոտ մեկդարյա մեր արյունոտ վերքերը այդպես էլ չեն սպիանում: Ամեն տարի ապրիլին հազարավոր հայ սրտեր հեծեծում ու կծկվում են ցավոտ անցյալի հուշերից ու իրենց խոնարհումը կատարում մեր զոհերի հիշատակին: Արվեստագետը չի կարող դիմակայել այսպիսի արհավիրքների, նրա նուրբ հոգին փշրվում է, վերածվում բյուրեղների ու ցրվում աշխարհի տարբեր անկյուններում ապաստանած հային գտնելու: Այդպիսի հոգի ուներ Կոմիտասը՝ հավետ որոնող, հավետ հալածված, յաթաղանից մազապուրծ մի ազգի սիմվոլ դարձած: Պատմությունը հիշեց նրան ու նրա հետ շատերին: Մեծ բանաստեղծ Պարույր Սեւակն էլ իր հոգին պարպեց՝ մեծ երգահանի ոդիսականը կերտելով անլռելի ղողանջներով: Այսօր եւս մեր ժամանակի արվեստագետը չի կարող անտարբեր լինել արհավիրքներ կրած մանուկների ու մայրերի, քույրերի ու ծերերի՝ քսաներորդ դարասկզբի միլիոնից ավել մեր անմեղ զոհերի հիշատակի հանդեպ: Նրա մեջ հասունանում է բողոք, ցասում, ընդվզման պահանջ:

Ահա մի այսպիսի ընդվզում-ինքնապարպում էր **Արթուր Սարգսյանի** կատարմամբ **Պ. Սեւակի «Անլռելի զանգակատուն»** պոեմի գեղարվեստապատում ընթերցումը: Սա «Պոեզիայի թատրոնի» հիմնադրի կողմից արդեն երկրորդ դասական պոեմի բեմելն է, երբ պոեզիայի կատարողը ինքնուրույն ստանձնում է երկի մշակումն ու հանդես գալիս դրա ընթերցմամբ:

Մեկ դերասանի թատրոնը յուրօրինակ երկխոսություն է կատարողի ու հանդիսատեսի միջեւ, որը կարող է ընթանալ կատարողական պրոֆեսիոնալ մեծ վարպետության շնորհիվ: Դերասանը գիտակցում էր, որ իր շուրթերով մի ամբողջ ազգի բողոք է հնչում: Կոմիտասյան ընդվզող մեղեդիները, սեւակյան ցասումը եւ մոլեգնորեն հնչող բառերը ժայթքում էին, ոգի առնում ու թեւածում. «գարուն ա, ձուն ա արել»: Դերասանը խոսքը պատկերի էր վերածում եւ խաղարկում էր, ձայնը, ելեւէջները կերպավորում էր ու դրանց օգնությամբ կարողանում էր տրամադրություն, տառապանք, թախիծ փոխանցել հանդիսատեսին: Արթուր Սարգսյանի կատարումը անբռնազբոս էր ու անմիջական, զուսպ ու տրամաբանված, փոթորկահույզ եւ դրանով հանդերձ ազդեցիկ: Նա կարողանում էր ներգրավել հանդիսատեսին իր ներաշխարհի փոթորկուն ու ալեկոծ հոգով, գութ անսացող կոչերով, մարդկային հավատով, ներքին աղաղակով, որն ասես երկինքն անգամ սասանում էր: Պատահական չէր նաեւ դերասանի սեւ հագուստով ներկայանալը դա կարծես հոգու տագնապի, կոմիտասյան եղերական տրամադրությանը համահունչ լիներ:

Բեմի ձեւավորումը (Ալ.Սպենդիարյանի անվան Օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոն) բավական զուսպ էր ու ազդեցիկ: Բեմի կենտրոնում սպիտակ նուրբ շղարշե վարագույրի վրա պատկերված էր սեւազգեստ վարդապետը՝ խելահեղ վազքի պահին, նրա նիհար ու դալուկ, մերկ ոտքերը մեր հոգում ըմբոստություն էին ծնում: Դեպի ձախ կախված էին մեծ ղողանջներ: Ներկայացման մտահղացման համաձայն՝ բեմում էին նաեւ «Օշական» համույթի լարային եւ վոկալ քառյակները, որոնք գործում էին այն պահին, երբ բառն այլեւս սպառում էր իրեն: Հնչում էին կոմիտասյան երաժշտությունն ու զուլալ երգերը: Գրականության եւ երաժշտության մի գտնված հետաքրքիր համադրություն էր Ա. Սարգսյանի բեմականացումը, որը պատմում էր մարդկային ողբերգության մասին:

Բեմադրության առանձնահատկություններից մեկն էլ այն էր, որ լույսը հանդես էր գալիս որպես կերպար, դառնում գործող: Էքսպոզիցիայում, երբ արվեստագետի արարման պատմությունն էր հնչում, բեմը լուսավորված էր կապտավուն լույսով՝ լուսավոր գալիքի ու հույսի սպասում էր արտահայտում: Ներկայացվող իրադարձությունների կտրուկ շրջադարձից հետո՝ բեմեզրի մոմերից այն կողմ, արդեն ուրիշ իրականություն էր՝ մահվան ու արյունոտ խոշտանգման իրականություն: Ներկայացման ավարտին զանգերը ղողանջում էին ծանր ու թավ, մետաղյա զնգոցով՝ որպես «մշտարթուն ու մշտահունչ անլռելի զանգակատուն»՝ միասնության ու համախմբման կոչով: Բեմը կրկին կապույտ էր լուսավորվում՝ շուրջբոլորը հավաս ու հույս սփռելով:

Իսկ զանգերը շարունակում էին ղողանջել...

**ՌՈՒԶԱՆՆԱ ԱՌԱՔԵԼՅԱՆ**
**թատերագիտական 3-րդ կուրս**

«ՀՆԴԿԱՀԱՅՔ»

# Տարեգիրք-2010-ի հրատարակության առիթով




**Հայոց լեզուն ու հայ դպրությունը շարունակվում են գոյատեւել աշխարհի որեւէ անկյունում, որտեղ թեկուզ սակավաթիվ հայեր կան: Կալկաթայի Հայոց մարդասիրական ճեմարանի գործունեությունը լավագույն վկայությունն է ասվածի: Հիշատակության արժանի է ճեմարանի՝ հասարակայնության հետ կապերի բաժնի կանոնավոր աշխատանքը, որի շնորհիվ հանրությանը պարբերաբար իրազեկվում է ինչպես ճեմարանական անցուդարձերի, այնպես էլ հնդկահայոց հոգեւոր հովվության գործունեության մասին: Այս իրադարձությունները համապարփակ ներկայացնելու գաղափարի ծնունդ է «Հնդկահայք» տարեգիրքը, որի երկրորդ հատորը լույս տեսավ վերջերս Կալկաթայում, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի օրհնությամբ, հիմնադիր-հրատարակիչ հնդկահայոց հոգեւոր հովիվ Խորեն աբղ. Հովհաննիսյանի հոգածությամբ, Ս. Նազարեթ եկեղեցու վարչության մեկենասությամբ:**

**Հնդկահայոց հոգեւոր եւ կրթական կյանքը ամփոփող տարեգրությունն ավելի տպավորիչ է դառնում պատկերագրքային հրատարակությամբ: Տարեգրքի երկլեզվյա (հայերեն եւ անգլերեն) բոլոր տեքստերը ուղեկցվում են գունավոր համապատասխան լուսանկարներով՝ բարձրորակ տպագրված: Տարեգիրքն իր բնույթով, փաստորեն, շարունակում է հնդկահայոց ազգային, մշակութային այն ավանդույթները, որոնք ձեւավորվել են այս հեռավոր երկրում դարեր առաջ. սա նաեւ ինչ-որ առումով տուրք է հայ առաջին տպագիր մամուլին՝ «Ազդարարին»՝ լույս տեսած Մադրասում, 1794 թ.:**

**Տարեգրքի կազմողները (աշխատասիրությամբ Նախշուն Դուրգարյանի) բարեխղճորեն հավաքել, ամփոփել են անցնող տարվա ընթացքում հայոց հոգեւոր եւ ճեմարանական կյանքին վերաբերող իրադարձությունները (հոբելյանական հանդիսություններ, հանդիպումներ, կրթական, մշակութային, բարեգործական ծրագրեր): Ճեմարանական կյանքում արձագանք են գտել ազգային, պետական ու եկեղեցական բոլոր կարեւոր տոները եւ պատշաճորեն նշվել: Կատարվել են տոնախմբություններ Սուրբ Ծննդյան տոների եւ Ամանորի առիթներով, Հայաստանի եւ Հնդկաստանի անկախության օրերին նվիրված հանդիսություններ. վերջինս 2010-ին համընկավ Հայ առաքելական եկեղեցու Սուրբ Աստվածածնի վերափոխման տոնին: Անցած տարի հանդիսավորապես նշվեց ճեմարանի հիմնադրման 189-րդ տարեդարձը:**

**2010-ին Հնդկաստանի տարբեր քաղաքներում լայնորեն նշեցին Մայր Թերեզայի ծննդյան 100-ամյակը, որին Կալկաթայում մասնակցեց ճեմարանի կառավարիչ հայր Խորեն Հովհաննիսյանը:**

**Հիշարժան իրադարձություններից են Անգլիկան եկեղեցու պետ Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկտոր Ռուան Վիլյամսի հետ հանդիպումը, պաշտոնական այցով Կալկաթա մեկնած Հայաստանի արտգործնախարար Էդվարդ Նալբանդյանի այցը Հայոց մարդասիրական ճեմարան:**

**Կրթական կյանքի կարեւոր մաս են կազմում տարաբնույթ մրցույթները. Սուրբ Սարգսի տոնին, օրինակ, կազմակերպվել է նկարչական մրցույթ, հետաքրքրական եւ ուսանելի է եղել գիտելիքի մրցույթը: Հայոց լեզվին նվիրված ցերեկույթ, գրական-երաժշտական ձեռնարկներ, գրքի ցուցահանդես, Արցախյան գոյամարտի հերոս-նահատակ Մոնթե Մելքոնյանին նվիրված հուշ-երեկո, Մարգար Մելքոնյանի՝ «Եղբորս ճանապարհը» գրքի շնորհանդես, Մովսես Խորենացու ծննդյան 1600-ամյակին նվիրված ցերեկույթ. այս ամենը հարստացնում են ճեմարանական առօրյան, նպաստում սաների գեղագիտական ճաշակի զարգացմանը, ընթերցանության, մշակույթի հանդեպ հետաքրքրություն առաջացնում:**



**Ուշադրության են արժանի հատկապես հնդկահայոց հոգեւոր հովվի ուխտագնացություններն ու բարեգործական ծրագրերի նրա մասնակցությունը, ինչպես Սայդաբադի Ս. Աստվածածին եւ Չինսուրայի Ս. Հովհաննես Մկրտիչ հայկական եկեղեցիներ, ապա եւ՝ այցելություն Կալկաթայի հայկական ծերանոց, «Anandhagar» բարեգործական հաստատության Հայ եկեղեցու «ՁԻԱՀ-ով հիվանդ երեխաների խնամքի կենտրոն», ուր ապաստանել են 3-13 տարեկան հիվանդ որբեր, մասնակցություն անապաստան եւ կարիքավոր երեխաների վերադաստիարակման, վերականգնման «Դոն Բասքո Աշալայամի» կազմակերպության արծաթե հոբելյանին:**

**Հիշարժան է եղել Հարավային Չինաստանի Շենզեն քաղաքում 40 հայորդիների մասնակցությամբ կայացած պատմական կնունքը, որի մկրտության խորհուրդը կատարել է Խորեն աբղ. Հովհաննիսյանը:**

**Ինչպես այս տարի, անցած տարի նույնպես Ապրիլքսանչորսի՝ Հայոց ցեղասպանության 95-րդ տարելիցին Ս. Նազարեթ մայր եկեղեցու բակում ցեղասպանության զոհերի հուշակոթողի մոտ պատարագ է մատուցվել:**

**Տարեգրքում զետեղված են նաեւ նամակ-շնորհավորանքներ «Հնդկահայքի» նախորդ հրատարակության առիթով ստացված, ընդարձակ անդրադարձներ կան հնդկահայ համայնքի երեւելիներին, նաեւ համայնքի կյանքի ավելի քիչ հայտնի դրվագներին վերաբերող:**

**Խորեն աբղ. Հովհաննիսյանի «Մի էջ հնդկահայ նվիրակության պատմությունից» հետաքրքրական հրապարակումը ներկայացնում է հրաշագործ մի եղելություն: Հետաքրքրական է ծանոթացումը Վազգեն Ա-ի 1963-ին Դելի կատարած այցելության մանրամասներին. նա առաջինն էր հայ կաթողիկոսներից, որ մեկնեց Հնդկաստան: Հնդկահայ համայնքին, նրա ձեւավորմանը, ավանդույթներին եւ ներկա ժամանակներում անհրաժեշտ նոր մեթոդներին ու ծրագրերին է անդրադառնում Ռիչարդ Հովհաննիսյանը:**

**ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ**

# Շարունակվում է ասմունքի հանրապետական 3-րդ փառատոնը



**Ինչպես «Ազգ»-ի ընթերցողներին տեղեկացրել ենք, մեկնարկել է ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի հովանու ներքո, ՀՀ կառավարության տարածքային նախարարության հետ համատեղ անցկացվող «Ասմունքի հանրապետական մանկապատանեկան 3-րդ մրցույթ-փառատոնը»: Այն այս տարի նվիրվել է հայ մեծանուն բանաստեղծ Հովհաննես Շիրազի 95-ամյակին: Երեկ Արարատի մարզի Արտաշատ քաղաքի Ամո Խարազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի շենքում կայացավ մարզային 2-րդ փուլը: Մարզի 112 դպրոցներից 1-ին փուլին մասնակցել էին շուրջ 1000 դպրոցականներ, որոնցից 38-ին հնարավորություն էր տրվել հանդես գալու 2-րդ փուլին: 2,5 ժամ մասնակիցները ոգեւորությամբ եւ հուզմունքով էին արտասանում բանաստեղծի ստեղծագործությունները:**

**Ժյուրիի անդամ, բանասիրական գիտությունների թեկնածու Կարո Վարդանյանը ներկայացրեց Հովհաննես Շիրազ բանաստեղծի մուտքը գրական ասպարեզ, նրա բովանդակալից, համաժողովրդական սիրով լեցուն կյանքն ու ստեղծագործական ուղին: Մրցույթի արդյունքում 2 տարիքային խմբերում հաղթող ճանաչվեցին 6 աշակերտներ, որոնք էլ կմասնակցեն Երեւանում կայանալիք եզրափակիչ փուլին:**

**Հաղթողներին ջերմորեն շնորհավորեց Պոլսի «Ժամանակ» օրաթերթի խմբագիր Սեւան Տէյիրմէնճեանը եւ իր խմբագրած վերջին՝ Միսակ Գոլունյանի «Կրակին մէջէն» գրքից օրինակներ նվիրեց 1-ին տեղերն զբաղեցրած մասնակիցներին: Բացի 6 մրցանակային տեղեր գրավածներից, բոլոր ասմունքողներին Արարատի փոխմարզպետ Սամվել Մինասյանը հանձնեց խրախուսական պարգեւներ ու մաղթեց, որ եզրափակիչ փուլում մարզի ներկայացուցիչները հաղթանակած տուն գնան:**

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**
**Արտաշատ**

# Բուենոս Այրեսի Գրքի միջազգային ցուցահանդեսում նշվել է Հայաստանի օրը

Բուենոս Այրեսում ընթացող Գրքի 37-րդ միջազգային ցուցահանդեսի շրջանակներում մայիսի 1-ին ավանդաբար նշվել է Հայաստանի Հանրապետության օրը:

ՀՀ դեսպանության եւ Հայաստանյայց առաքելական եկեղեցու կենտրոնական վարչության ջանքերի շնորհիվ Հայաստանի տաղավարը ներկայացված էր այլ երկրների ու հրատարակչությունների տաղավարների շարքում: Նշենք, որ Բուենոս Այրեսի Գրքի 37-րդ միջազգային ցուցահանդեսում ներկայացված են 42 պետություններ եւ 1500 հրատարակչություններ:

Նկատի ունենալով, որ 2011 թվականին Բուենոս Այրեսը հռչակվել է Գրքի միջազգային մայրաքաղաք՝ ցուցահանդեսի համար ընտրվել է «Քաղաք, որ բաց է գրքերի աշխարհին» կարգախոսը:

«Հայաստանի օրվա» հանդիսությունները կայացել են Գրքի ցուցահանդեսը հյուրընկալող «Ռուրալ» համալիրի՝ «Խոսե Էռնանդես» սրահում: Միջոցառմանը ներկա 1000-ից ավելի հանդիսականներին ուղղված իր խոսքում Հայաստանի դեսպան **Վլադիմիր Կարմիրշալյանը** մասնավորապես նշել է. որ շատ խորհրդանշական է, որ քույր քաղաքներ հանդիսացող Բուենոս Այրեսն ու Երեւանը հաջորդաբար ստանձնում են Գրքի միջազգային մայրաքաղաքի պատվավոր տիտղոսը: Վերջում կայացել է համերգ:

ԱԶԳ

# Մարզական

# «Բարսելոնը» 7-րդ անգամ կվիճարկի չեմպիոնների գավաթը

*«Ուեմբլին» հաջողակ մարզադաշտ է կատալոնացիների համար*

Իսպանական «Բարսելոնը» 7-րդ անգամ մտավ չեմպիոնների լիգայի եզրափակիչ: Ինչպես եւ սպասվում էր, հրաշք տեղի չունեցավ ու Մադրիդի «Ռեալին» չհաջողվեց «Կամպ նոու» մարզադաշտում առանց գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյոյի (նա հանդիպմանը հետեւում էր հեռուստատեսությամբ) ռեւանշի հասնել «Բարսելոնի» նկատմամբ: 54-րդ րոպեին Պեդրոյի խփած գոլը վերջնականապես ի չիք դարձրեց եզրափակիչի ուղեգիր նվաճելու «Ռեալի» բոլոր հույսերը: Հյուրերին հաջողվեց միայն խուսափել պարտությունից Մարսելոյի խփած գոլի շնորհիվ:



Այսպիսով, ընթացիկ մրցաշրջանում իսպանական հզոր ակումբների միջեւ կայացած սուպերկլասիկոն ավարտվեց «Բարսելոնի» օգտին, որը մայիսի 28-ին Լոնդոնի «Ուեմբլի» մարզադաշտում կփորձի 4-րդ անգամ նվաճել պատվավոր մրցանակը: Ի դեպ, «Ուեմբլին» հաջողակ է եղել կատալոնական ակումբի համար, որտեղ 1992-ի մայիսի 20-ին «Բարսելոնը» նվաճել է իր առաջին տիտղոսը՝ չեմպիոնների լիգայի եզրափակիչում, լրացուցիչ ժամանակում 1-0 հաշվով հաղթելով իտալական «Սամպդորիային»: 2006-ին «Բարսելոնը» դարձավ չեմպիոնների կրկնակի գավաթակիր՝ 2-1 հաշվով առավելության հասնելով Լոնդոնի «Արսենալի» նկատմամբ: Իսկ 2009-ին «Բարսելոնը» Հռոմում 2-0 հաշվով պարտության մատնելով «Մանչեսթր Յունայթեդին», 3-րդ անգամ նվաճեց չեմպիոնների գավաթը:

Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում թիմերի մարզիչները («Ռեալը» ներկայացրել է Մոուրինյոյի օգնականը) հետեւյալ կարծիքն են արտահայտել:

**Խոսեպ Գվարդիոլա** («Բարսելոն»)- Սա պարզապես անհավատալի է՝ հաշվի առնելով, թե ինչպիսի դժվարություններ հարկ եղավ հաղթահարել մեր ֆուտբոլիստներին: Նրանք շարունակում են քրտնաջան աշխատել: Շնորհակալ եմ բոլորից: Մենք մեր առաջին չեմպիոնների գավաթը նվաճել ենք «Ուեմբլիում»: Այժմ էլ գնում ենք Լոնդոն 4-րդ գավաթի հետեւից:

Առաջին խաղակեսում հրաշալի խաղ ցուցադրեցինք, սակայն մեզ դիմակայում էր Իկեր Կասիլյասի պես հիանալի դարպասապահ: Ընդմիջումից հետո տեմպը մի փոքր թուլացրինք, սակայն խփած գոլը օգնուեց մեզ: Կցանկանայի նշել «Ռեալի» հիանալի խաղը: Թիմը 9 անգամ նվաճել է չեմպիոնների գավաթը, աշխարհի ամենահարուստ եւ հզոր թիմն է: Գիտեինք, որ «Ռեալի» հետ խաղում մեզ շատ դժվար է լինելու, որ մրցակիցը եզրափակիչի ուղեգրի նվաճման համար ներդնելու է իր ողջ ուժերը: Կարծում եմ, որ եզրափակիչում մեր մրցակիցը «Մանչեսթր Յունայթեդը» կլինի: Ալեքս Ֆերգյուսոնն իր սաների հետ մշտապես պայքարում է տիտղոսների համար: Որպես երիտասարդ մարզիչ իմ համար մեծ պատիվ է նրա հետ եզրափակիչում մրցելը:

**Այտոր Կարանկա** («Ռեալ»)- Խաղից առաջ զրուցել եմ Ժոզե Մոուրինյոյի հետ, քննարկել գործողությունների տարբերակներ: Խաղից հետո նա զանգահարեց հանդերձարան ու շնորհավորեց բոլոր ֆուտբոլիստներին: Մենք կարող էինք Բարսելոն ժամանել 0-0 հաշվի պայմաններում: Դժվարին կացության մեջ թիմը չերերաց: Թիմի երկրպագուները պետք է հպարտանան վերջին ամիսներին կատարվածով: Իսպանիայի առաջնությունում դեռ մի քանի խաղ կա անցկացնելու: Քանի դեռ մրցաշրջանը չի ավարտվել, գնահատական տալը վաղ է: Այսօր «Ռեալը» դրսեւորեց իր իրական ուժը: Ֆուտբոլասերները կրկին համոզվեցին, թե «Ռեալն» իրենից ինչ է ներկայացնում:

«Ռեալի» հետ կիսաեզրափակիչ պատասխան հանդիպումը չեմպիոնների լիգայի մրցաշարում «Բարսելոնի» գլխավոր մարզչի պաշտոնում Գվարդիոլայի 36-րդ խաղն էր: Այս ցուցանիշով նա հավասարվեց Լուի վան Գալին, որը «Բարսելոնը» գլխավորել է 1997-2000-ին: Իսկ բոլորից շատ խաղ չեմպիոնների լիգայի մրցաշարում «Բարսելոնն» անցկացրել է Ֆրանկ Ռայկարդի օրոք: 2004-2007-ին նրա գլխավորությամբ կատալոնացիները 38 խաղ են անցկացրել:

## Մեսին կկրկնի Մյուլլերի եւ Պապենի ռեկորդը

Իսպանական «Բարսելոնի» հարձակվող Լիոնել Մեսին 3-րդ տարին անընդմեջ կճանաչվի չեմպիոնների լիգայի լավագույն ռմբարկու: Նա կկրկնի Գերդ Մյուլլերի եւ Ժան Պիեռ Պապենի ռեկորդային ցուցանիշը, որոնց հաջողվել է 3 մրցաշրջան անընդմեջ ճանաչվել չեմպիոնների գավաթի խաղարկության լավագույն ռմբարկու:

Արդեն այժմ Լիոնել Մեսին կարող է ընդունել շնորհավորանքները լավագույն ռմբարկուի տիտղոսին արժանանալու առթիվ: Նա 11 գնդակով վստահորեն գլխավորում է լավագույն ռմբարկուների ցուցակը: 8-ական գոլ են խփել մրցաշարում պայքարն ավարտած Մարիո Գոմեսը («Բավարիա») եւ Սամուել Էտո՛օ-ն («Ինտեր»): Մեսին հնարավորություն ունի կրկնելու եւ նույնիսկ գերազանցելու հոլանդացի Ռուդ վան Նիստելռոյի մեկ մրցաշրջանի արդյունավետության ռեկորդը, որը 2002/03-ի չեմպիոնների լիգայի մրցաշարում 12 գոլ է խփել: Վերջինիս եւս երկու անգամ՝ 2002-ին (10 գոլ) եւ 2005-ին (8 գոլ) հաջողվել է դառնալ լավագույն ռմբարկու:

Լիոնել Մեսին անցած մրցաշրջանում լավագույնի տիտղոսին էր արժանացել 8 գոլով՝ մեկ գնդակով գերազանցելով Քրիշտիանու Ռոնալդուին («Ռեալ») եւ Իվիցա Օլիչին («Բավարիա»): Իսկ 2009-ին արգենտինացի ֆուտբոլիստը խփել էր 9 գնդակ՝ 2 գոլով առաջ անցնելով Սթիվեն Ջերարդից («Լիվերպուլ») եւ Միրոսլավ Կլոզեից («Բավարիա»):

Գերմանացի լեգենդար հարձակվող Գերդ Մյուլլերը յուրօրինակ ռեկորդակիր է: Նա 4 անգամ է ճանաչվել չեմպիոնների գավաթի խաղարկության լավագույն ռմբարկու, ընդ որում 3 անգամ՝ անընդմեջ: Առաջին անգամ նա ամենաարդյունավետ ֆուտբոլիստի տիտղոսը նվաճել է 1973-ին՝ խփելով 11 գնդակ: Հաջորդ տարի նա խփեց 8 գոլ, իսկ 1975-ին 5 գնդակով Էդուարդ Մարգարովի հետ ճանաչվեց չեմպիոնների գավաթի լավագույն ռմբարկու: Իր 4-րդ տիտղոսը Մյուլլերը նվաճել է 1977-ին՝ կրկին դառնալով 5 գոլի հեղինակ:

Մարսելի «Օլիմպիկի» նախկին հարձակվող Ժան Պիեռ Պապենն էլ 3 տարի անընդմեջ ճանաչվել է լավագույն ռմբարկու: 1990-ին նա 6 գոլով ռմբարկուի դափնին կիսել է բրազիլացի Ռոմարիոյի հետ: Հաջորդ տարի արդյունքը կրկնել է «Տիրոլի» ֆուտբոլիստ Պետեր Պակուլտի հետ, իսկ 1992-ին 7 գոլ է խփել «Բենֆիկայի» հարձակվող Սերգեյ Յուրանի հետ:

3 անգամ (1965, 1966 եւ 1968-ին) չեմպիոնների գավաթի խաղարկության լավագույն ռմբարկու է ճանաչվել լեգենդար պորտուգալացի ֆուտբոլիստ Էյսեբիոն: Իսկ չեմպիոնների գավաթի խաղարկության մեկ մրցաշրջանի արդյունավետության ռեկորդը պատկանում է «Միլանի» նախկին ֆուտբոլիստ Ժոզե Ալտաֆինիին, որը 1963-ին 14 գոլ է խփել:

## Առաջին մրցակիցը Վրաստանի հավաքականն է

Կահիրեում մեկնարկում է թենիսի ֆեդերացիայի գավաթի եվրոաֆրիկյան գոտու 2-րդ խմբի մրցաշարը, որի 7 մասնակիցների թվում է նաեւ Հայաստանի կանանց հավաքականը: Մասնակից 7 թիմերը բաժանվել են երկու խմբի: Հայաստանի հավաքականն ընդգրկվել է B խմբում, որտեղ մրցելու է Վրաստանի, Թուրքիայի եւ Բոսնիայի թենիսիստուհիների հետ: Առաջին խաղում մեր թիմի մրցակիցը վրացի թենիսիստուհիներն են:

Հայաստանի հավաքականի կազմում Կահիրեում հանդես կգան Անի Ամիրխանյանը, Օֆելյա Պողոսյանը, Նունե Խաչատրյանն ու Աննա Մովսիսյանը: Մրցակարգի համաձայն խմբերի հաղթողներն իրավունք կստանան հաջորդ տարի հանդես գալու եվրոաֆրիկյան գոտու 1-ին խմբի մրցաշարում, իսկ 2 անհաջողակները կտեղափոխվեն 3-րդ խումբ:

## Բալը Բլոխինի հետ չի աշխատի

Օդեսայի «Չեռնոմորեցի» նախկին գլխավոր մարզիչ Անդրեյ Բալը հրաժարվել է ընդգրկվել Ուկրաինայի ֆուտբոլի ազգային հավաքականի մարզչական կազմում, որը վերջերս գլխավորեց Օլեգ Բլոխինը: Բալը ցանկանում է աշխատել որպես գլխավոր մարզիչ եւ արդեն իրեն չի պատկերացնում օգնականի դերում: Բացի այդ, նա դժգոհ է «Չեռնոմորեցում» Բլոխինի հետ համատեղ աշխատանքից: Հիշեցնենք, որ Բլոխինն այդ թիմում զբաղեցնում էր մարզական տնօրենի պաշտոնը:

ՇԱԽՄԱՏ

## Հաղթական մեկնարկ

**Գրոսմայստեր Հրանտ Մելքումյանը հաղթանակով սկսեց Սարաեւոյում մեկնարկած շախմատի մրցաշարը՝ պարտության մատնելով Դեյան Մարիանովիչին: 2-րդ տուրում նրա մրցակիցը կլինի Ժասմին Բեջթովիչը, որն առավելության է հասել Իզեթ Լակոտայի նկատմամբ: Մրցաշարին մասնակցում են 103 շախմատիստներ:**

## Եզրափակիչը վստահվել է իտալացի մրցավարներին

**Մայիսի 11-ին «Հանրապետական» մարզադաշտում կայանալիք «Միկա»-«Շիրակ» գավաթի եզրափակիչ հանդիպումը կսպասարկի Իտալիայի մրցավարական բրիգադը Դավիդ Ֆեռնանդես Բորբալանի գլխավորությամբ: Նրան կօգնեն Խեսուս Կալվո Գուադամուրոն եւ Էնրիկե Անդրես Սամպերը: Սա առաջին դեպքը չէ, որ գավաթի խաղարկության վճռորոշ խաղերի սպասարկումը վստահվում է արտերկրից ժամանած մրցավարներին: Ֆուտբոլասերներին տեղեկացնենք, որ գավաթի եզրափակիչ հանդիպումը կսկսվի ժամը 20-ին:**

## Ստեւիցա Կուզմանովսկին պաշտոնանկ արվեց

**Ինչպես սպասվում էր, «Բանանցի» ղեկավարությունը պաշտոնանկ արեց մակեդոնացի մասնագետ Ստեւիցա Կուզմանովսկուն: Նրա գլխավորությամբ «Բանանցը» շատ անհաջող հանդես եկավ առաջնության առաջին շրջանում: 7 խաղում վաստակելով ընդամենը 3 միավոր, չտոնելով ոչ մի հաղթանակ, «Բանանցը» հանգրվանել է աղյուսակի նախավերջին հորիզոնականում: Մինչեւ առաջնության ավարտը «Բանանցի» գլխավոր մարզչի պարտականությունները կկատարի Ռաֆայել Նազարյանը, որը նաեւ ՀՀ երիտասարդական հավաքականի գլխավոր մարզիչն է:**



**Մինչդեռ նախորդ առաջնությունում Ստեւիցա Կուզմանովսկուն հաջողվել էր մարտունակ ֆուտբոլային կոլեկտիվ ստեղծել ու լրջորեն պայքարել չեմպիոնության համար: Գավաթի խաղարկությունում էլ թիմը հասել էր եզրափակիչ, որտեղ 0-4 հաշվով զիջել էր «Փյունիկին»:**

**Կուզմանովսկին օտարերկրացի 6-րդ մարզիչն էր, որը վերջին 5 տարիներին գլխավորել է «Բանանցը»: Ակումբի ղեկավարությունը վերջին տարիներին թիմի ղեկը հիմնականում վստահում էր արտերկրից հրավիրված մասնագետների: Առաջինը ռուսաստանցի Նիկոլայ Կիսելյովն էր, որը թիմը գլխավորել է 2006-ին: Նրա գլխավորությամբ «Բանանցը» դարձավ 2-րդ մրցանակակիր: Սակայն մրցաշրջանի ավարտից հետո ակումբի ղեկավարությունը հրաժարվեց Կիսելյովի ծառայություններից:**

**2007-ին Կիսելյովին փոխարինած չեխ մարզիչ Յան Պոշտուլկան մրցաշրջանի կեսից հեռացավ թիմից, թեեւ նրա օրոք «Բանանցը» նվաճել էր Հայաստանի գավաթը: Նրան փոխարինեց բուլղարացի Նիկոլայ Կոստովը, որի գլխավորությամբ թիմն ավարտեց առաջնությունը՝ հանգրվանելով 2-րդ հորիզոնականում: Կոստովի օրոք «Բանանցն» անցկացրած 11 հանդիպումներից 8-ը շահեց, 3-ում պարտվեց: Ակումբի ղեկավարությունն այս անգամ գոհ էր մարզչի գործունեությունից: Սակայն 2008-ի առաջնության մեկնարկի շեմին Կոստովը հրավեր ստացավ «Մետալուրգից» ու մեկնեց Դոնեցկ: Նրա տեղը «Բանանցում» զբաղեցրեց օգնականը՝ բուլղարացի Նեդելչո Մատուշեւը: Վերջինիս օրոք թիմն անհաջող ելույթներ ունեցավ ինչպես առաջնությունում եւ գավաթի խաղարկությունում, այնպես էլ ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում, որտեղ երկու խաղերի ընդհանուր արդյունքով 0-10 հաշվով զիջեց ավստրիական «Զալցբուրգին»: Մատուշեւը 16-րդ տուրից հետո պաշտոնանկ արվեց: Նրան փոխարինեց դանիացի Կիմ Սպլիդսբոելը, որի գլխավորությամբ «Բանանցն» ընդամենը 6 խաղ անցկացրեց, որից հետո թիմի ղեկը հանձնեց Արմեն Գյուլբուդաղյանցին:**

**Այսպիսով, «Բանանցը» գլխավորած օտարերկրացի 6 մարզիչներից բոլորից երկար թիմում աշխատելու բախտ վիճակվեց Ստեւիցա Կուզմանովսկուն: Նրա օրոք «Բանանցը» ՀՀ առաջնությունում 35 խաղ անցկացրեց, որից 20-ում հաղթեց, 7-ն ավարտեց ոչ-ոքի, 8-ում պարտվեց:**

**Նշենք, որ Կուզմանովսկին ընթացիկ մրցաշրջանում Հայաստանում աշխատող օտարերկրացի միակ գլխավոր մարզիչն էր: Նրա պաշտոնանկությունն էլ առաջինն էր այս մրցաշրջանում:**

## «Արսենալը» մտադիր է բաժանվել Արշավինից

**Լոնդոնի «Արսենալը» մտադիր է ամռանը բաժանվել ռուսաստանցի կիսապաշտպան Անդրեյ Արշավինից: Նրա փոխարեն Արսեն Վենգերը ցանկանում է իր թիմում տեսնել «Բարսելոնի» հարձակվող Բոյան Կրկիչին կամ էլ Դոնեցկի «Շախտյորի» կիսապաշտպան, բրազիլացի Վիլիանին:**




**Ընթացիկ մրցաշրջանում Արշավինը թիմի կազմում Անգլիայի առաջնությունում 34 խաղ է անցկացրել ու խփել է 6 գնդակ: Թիմի գլխավոր մարզիչ Արսեն Վենգերը դժգոհ է Արշավինի խաղից, որն «Արսենալ» էր տեղափոխվել «Զենիթից» 2009-ին 15 մլն ֆունտ ստեռլինգի դիմաց:**

**«Բարսելոնի» կազմում ընդամենը 7 անգամ խաղադաշտ դուրս եկած Կրկիչը մտադիր է մրցաշրջանի ավարտից հետո բանակցել ակումբի ղեկավարության հետ: Թեեւ նա մինչեւ 2015-ը գործող պայմանագիր ունի թիմի հետ, սակայն դժվար է «Բարսելոնի» կազմում ամրապնդվելը: Կրկիչով հետաքրքրվում էր «Լիվերպուլը», որը պատրաստ էր 15 մլն ֆունտ ստեռլինգ վճարել ֆուտբոլիստի տեղափոխման դիմաց: «Նապոլին» եւս դեմ չէ իր շարքերում ընդգրկելու Կրկիչին:**

**Բրազիլացի Վիլիանն արդեն 4 տարի խաղում է «Շախտյորում»: Նրա տրանսֆերի համար «Շախտյորը» 17 մլն դոլար է վճարել ու հույս ունի վաճառել 20 մլն ֆունտ ստեռլինգով: «Շախտյորի» կազմում նա դարձել է Ուկրաինայի կրկնակի չեմպիոն, նվաճել է ՈՒԵՖԱ-ի գավաթը:**

**Ինչ վերաբերում է Արշավինին, ապա «Զենիթը» պատրաստ է հետ ընդունել իր խաղացողին: Ռոման Աբրամովիչի ցանկում էլ նշված է նրա անունը: Աբրամովիչը թիմի կազմն ուժեղացնելու համար արդեն 80 մլն ֆունտ ստեռլինգ է հատկացրել:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

# Օրվա հետքերով

## «Համակարգիչ բոլորի համար» ծրագրին միացավ նաեւ «Օրանժ Արմենիան»

### *2010-ին Հայաստան է ներմուծվել 34 հազար համակարգիչ*

Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ **Տիգրան Դավթյանը** եւ «Օրանժ Արմենիայի» գլխավոր տնօրեն **Բրունո Դյութուան** երեկ համագործակցության հուշագիր ստորագրեցին «Համակարգիչ բոլորի համար» ծրագրի շրջանակներում համագործակցության մասին:

Հուշագրի ստորագրման արարողությունից հետո էկոնոմիկայի նախարար Տիգրան Դավթյանը ներկաներին հիշեցրեց, որ ծրագրի նպատակն է ապահովել համակարգիչների հասանելիությունը Հայաստանի բոլոր քաղաքացիների համար: Ըստ նրա, համակարգիչն այսօր անհրաժեշտություն է՝ արտադրության միջոց: Այն հաճախ մատչելի չէ բնակչության որոշ խավերի համար, ուստի պետությունը միջոցներ է հատկացրել ապահովելու համար մատչելիությունը համակարգչին, ընդլայնելու այն մարզերում: Տիգրան Դավթյանի համոզմամբ՝ «Օրանժ Արմենիայի» ներգրավումն այս ծրագրում նոր թափ կհաղորդի ծրագրի իրագործմանը: «Սա է այս պայմանագրի խորհուրդը», նշեց նախարարը, ավելացնելով, որ այս ծրագիրը կշարունակվի, որի համար պետությունը բավականին լուրջ միջոցներ է տրամադրել եւ ռեսուրսներ ներգրավել Համաշխարհային բանկից:



«Օրանժ Արմենիայի» գլխավոր տնօրեն Բրունո Դյութուան նշեց, որ Հայաստանում գործելու մեկնարկից ընկերությունը նպատակ է դրել լայնաշերտ ինտերնետը հասցնել բոլորին՝ անկախ եկամուտներից եւ բնակության վայրից: «Համակարգիչ բոլորի համար» ծրագիրը, ըստ Բրունո Դյութուայի, համընկնում է «Օրանժ Արմենիայի» վերոնշյալ քաղաքականությանը, ինչի համար ընկերությունը կտրամադրի իր վաճառքի կետերի ցանցը: «Դրանով կօժանդակենք Հայաստանում տեղեկատվական հասարակության կայացմանը», ասաց «Օրանժ Արմենիայի» գլխավոր տնօրենը:

Ձեռնարկությունների ինկուբատոր հիմնադրամի գործադիր տնօրեն **Բագրատ Ենգիբարյանը** հայտնեց, որ ծրագրի շրջանակներում 17 հազարից ավելի համակարգիչ է վաճառվել: «Դա հաստատեց մեր այն մոտեցումը, որ այս ծրագիրը չի խանգարի համակարգիչների վաճառքով զբաղվող այլ ընկերություններին, այլ կատալիտիկ դեր ունեցավ», ասաց հիմնադրամի գործադիր տնօրենը, ավելացնելով, որ ծրագրի արդյունքում 2010-ին 34 հազար համակարգիչ է ներմուծվել Հայաստան, 2009-ի 6 հազար համակարգչի փոխարեն:

Բագրատ Ենգիբարյանը տեղեկացրեց, որ ծրագիրը շարունակվելու է եւ համակարգիչ արտադրող ընկերությունները պետք է հաստատեն իրենց մասնակցությունը: Համակարգիչները լինելու են ոչ միայն ծրագրերով համալրված, այլ նաեւ ապահովված դասընթացներով, ուսումնական եւ այլ օժանդակ նյութերով, դրան զուգահեռ նաեւ ունենան ինտերնետ հասանելիություն:

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

## «Բաց խաղ»՝ Orange-ի հերթական անակնկալը

**Հայաստանում առաջին անգամ մեկնարկել է համակարգչային խաղերի նախագծման առաջնություն: Մրցույթը կրում է «Բաց խաղ» խորագիրը, այն կազմակերպել են Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունը (ԻՏՁՄ) եւ «Orange Արմենիա» ընկերությունը: Առաջնության նպատակն է մեր երկրում եւս զարգացնել համակարգչային խաղերի նախագծման ոլորտը, ինչը հնարավորություն կտա ստեղծել այստեղ նոր բիզնես միջավայր ու բացահայտել շնորհալի մարդկանց:**




ԻՏՁՄ-ի եւ «Orange Արմենիա» ընկերության տնօրենները երեկ հանդես եկան համատեղ ասուլիսով: «Orange Արմենիայի» տնօրեն **Բրունո Դյութուան** տեղեկացրեց, որ մրցույթի մասնակիցները կարող են ներկայացնել և՛ համակարգչային, և՛ հեռախոսային խաղերի նախագծեր: Մրցույթը նախաձեռնել է ԻՏՁՄ-ն, իսկ հովանավորությունը ստանձնել է «Orange Արմենիան», որը նաեւ առաջնության կազմակերպիչն է: Բրունո Դյութուան նշեց, որ իրենց ընկերությունը միացել է նախաձեռնությանը, որովհետեւ արդեն մի քանի տարի տարբեր երկրներում արագորեն զարգանում է համակարգչային ու հեռախոսային խաղերի ոլորտը, հետեւաբար հայկական բովանդակությունը չպետք է հետ մնա համաշխարհային զարգացումներից. «Բացի դրանից՝ Հայաստանում կա պոտենցիալ, որն իր ողջ ծավալով չի դրսեւորվում ու զարգանում»: Վերջինս ասում է, որ իրենց նպատակն է բացահայտել շնորհալիներին, որոնք այս ոլորտում դրսեւորվելու հնարավորություն դեռ չեն ունեցել: Հնարավոր է մրցույթից հետո վաճառվեն լավագույն խաղերը, նաեւ առաջնությունը կօգնի երիտասարդներին ձեռք բերելու նոր ծանոթներ եւ գտնելու լավ աշխատանք:

Առաջնությունն անցկացվում է 4 փուլով եւ ունենալու է 7 անվանակարգ: Բանախոսների փոխանցմամբ՝ մասնակիցները մինչեւ 3-րդ փուլը ներառյալ կարող են գրանցվել, սակայն պետք է հաշվի առնեն, որ կկորցնեն անցկացված փուլերի միավորները: Բոլոր կատեգորիաների հաղթողները ստանալու են դրամական պարգեւներ: Լավագույն խաղի համար նախատեսված դրամական մրցանակը 300 հազար դրամ է, մրցանակային ֆոնդի մնացած գումարը բաշխվելու է ըստ կատեգորիաների: 23 հոգի արդեն գրանցվել են ու ներկայացրել իրենց խաղերը: Ըստ ԻՏՁՄ-ի գործադիր տնօրեն **Կարեն Վարդանյանի**՝ ներկայացվել են բավականին գոհացուցիչ աշխատանքներ: Կարեն Վարդանյանը նաեւ տեղեկացրեց. «Քանի որ մրցույթն առաջին անգամն է անցկացվում, դրա համար էլ տարիքային սահմանափակումներ չենք դրել. ուզում ենք նախ տեսնել, թե ինչ պոտենցիալ ունենք»:

Ապա անդրադառնալով խաղերի հետագա ճակատագրին՝ Բրունո Դյութուան նշեց. «Եթե խաղը լինի հետաքրքրական, ապա կարող է առեւտրայնացվել և՛ Հայաստանում, և՛ արտասահմանում»:

Մրցույթի ժյուրիի կազմում ընդգրկված 3 ընկերությունները իրենց բիզնեսն ունեն խաղերի ինդուստրիայում, ուստի հնարավոր է, որ մասնակիցներին նրանք նոր առաջարկներ անեն:

Իսկ հունիսի 18-ին Orange-ի գլխավոր խանութում արդեն կլինի մրցանակաբաշխությունը, նույն օրն այստեղ կլինի նաեւ ցուցահանդես, որտեղ կցուցադրվեն ինչպես մասնակիցների մշակած, այնպես էլ համակարգչային խաղերի ոլորտը ներկայացնող այլ ստուդիաների ու արտադրողների խաղերը:

Առաջնության շրջանակներում կազմակերպվելու են նաեւ համակարգչային խաղերի նախագծման դասընթացներ, որոնց նպատակն է սկսնակներին հնարավորություն ընձեռել ձեռք բերելու գիտելիքներ խաղերի նախագծման, դիզայնի ու անիմացիայի վերաբերյալ:

**ԻՆԳԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ**

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻՑ

## Քաղաքապետ. Նուբարաշենի խնդիրները շատ են

**6.000 բնակչություն ունեցող Նուբարաշենի վարչական շրջանում կուտակված խնդիրները շատ են՝ ցածր է աղբահանության վճարների հավաքագրման ցուցանիշը, վերանորոգման կարիք ունեն բազմաբնակարան շենքերի տանիքներն ու շքամուտքերը, բարեկարգման անհրաժեշտություն կա բակային տարածքներում: Նուբարաշեն աշխատանքային շրջայց կատարած Երեւանի քաղաքապետ Կարեն Կարապետյանը հանձնարարել է գույքագրել վարչական շրջանի հիմնախնդիրներն ու գտնել դրանց լուծման հնարավոր տարբերակներ:**

**Քաղաքապետի գնահատմամբ՝ Երեւանը պետք է գրավիչ եւ հարմարավետ լինի յուրաքանչյուր բնակչի համար: Պետք է ապահովվեն կենցաղային տարրական պայմաններ: Մայրաքաղաքի ծայրամասերն էլ չպետք է դուրս մնան զարգացման ընդհանուր ծրագրերից:**

**«Ճիշտ է, Նուբարաշենը քաղաքից կտրված է, բայց քաղաքի մի մասն է, եւ այն, ինչ կատարվում է մայրաքաղաքում, պետք է իր անդրադարձն ունենա նաեւ Նուբարաշենում», ասաց Կարապետյանը:**

Հ. Հ.

## «Մի՛ միջամտեք մեր դպրոցում ծագած ներքին խնդիրներին»

### *Պահանջում են Վաղարշապատի թիվ 2 դպրոցի ուսուցիչները*

**Վաղարշապատի Գրիգոր Նարեկացու անվան թիվ 2 ավագ դպրոցի ուսուցչական անձնակազմը խմբագրություն ուղարկված բաց նամակում պահանջում է լրատվամիջոցներից՝ չմիջամտել դպրոցում ծագած ներքին խնդիրներին: «Ստեղծված իրավիճակը ոչ միայն չի նպաստում դպրոցում առաջացած խնդիրների լուծմանը, այլեւ ստեղծում է բարոյահոգեբանական լարված մթնոլորտ, որը խաթարում է մեր բնականոն աշխատանքը», ասված է հայտարարության մեջ: Ուսուցիչները խոստովանում են, որ հույս ունեին, թե քննությունը կավարտվի ի շահ դպրոցի , քանի որ «ոչ մի արտառոց բան տեղի չէր ունեցել... սակայն մեզ համար տարօրինակ որոշում էր կրկնակի տույժը, որին ենթարկվեց մեր տնօրենը՝ նախկին անհիմն խիստ նկատողությունից հետո: Դրան համաձայն չեն դպրոցի մանկավարժական անձնակազմը, աշակերտությունն ու ծնողները, որոնց կարծիքը քննություն անցկացնող պատասխանատուներն արհամարհեցին»:**

**Հայտարարության մեջ ուսուցիչները գրում են, որ դպրոցի «առայժմ ազատված» տնօրեն Սուսաննա Նազարյանի օրոք բարձրացել է կրթության որակն ու առաջադիմությունը: Նրանց ներկայացրած տվյալներով՝ 2011 թ. մարտ-ապրիլ ամիսներին ԵՊՀ դպրոցականների հանրապետական օլիմպիադային մասնակցած դպրոցի 11 աշակերտ արժանացել է 2-րդ եւ 3-րդ կարգի դիպլոմների եւ գովասանագրերի:**

**«Յուրաքանչյուր տարի միայն պետական ուսումնական հաստատություններ է ընդունվում դպրոցի շրջանավարտների 60 տոկոսը՝ զբաղեցնելով նաեւ անվճար տեղեր: Նման ծայրահեղ խստությամբ կայացված որոշումը վնաս է հասցնում դպրոցի վարկանիշին եւ հեղինակությանը: Պահանջում ենք վերստուգության ենթարկել ԿԳ նախարարի հրամանը: Պահանջում ենք պատասխան տալ այն որոշման համար, թե տնօրենին հարվածող աշակերտի պարագայում ճի՞շտ է արդյոք տնօրենին անհիմն ազատելը»:**

Հ. Հ.

## Խաչի պատկեր ծառի բնի մեջ



Շատերը հրաշքների չեն հավատում: Սակայն այն, ինչ տեսա Արարատի մարզի Արտաշատ քաղաքում, ուրիշ բառով չեմ կարող բնութագրել: Մայիսի 1-ին քաղաքի մարզադաշտում տասնամյակներ առաջ տնկված դեկորատիվ ծառն արդեն չորացել էր ու դարձել վտանգավոր: Որոշվում է ծառը կտրել ու տարածքը բարեկարգել: Երբ հասել են ծառի հաստափոր բնին, երեւացել է խաչի պատկերը: Ապշահար աշխատողները փորձել են էլ ավելի ներքեւի մասից ծառի կոճղը սղոցել՝ կրկին խաչը հստակ երեւացել է: Այս հրաշքը մի քանի օր է իր շուրջն է հավաքում բազմաթիվ մարդկանց, որոնք իրենց աչքով տեսնում են խաչը ծառի բնի մեջ: Կտրված կոճղերից երկուսը տարվել են հատուկ ուսումնասիրության եւ շուտով պարզ կդառնա այդ հրաշքի գիտական բացատրությունը, թե ինչպես է խաչ առաջանում ծառի բունը կտրելուց:

**ՄԱՐԻԵՏԱ ՄԱԿԱՐՅԱՆ**
**Արտաշատ**

Երեւանի Ապրանքա-Հումքային Բորսայի հարթակում իրականացվում է ԱրմենՏել ՓԲԸ-ի կողմից ներկայացված՝ Գծամալուխային կառույցների (ЛКС), սարքավորումների, միկրոսխեմաների, ռելեների, դիոդների, պլատաների, տրանզիստորների, դիմադրությունների, կանգնակների եւ ապրանքանյութական այլ բազմանուն արժեքների աճուրդային վաճառք:

Աճուրդները իրականացվում են յուրաքանչյուր աշխ. օր ժ.11.00 – 17.00-ն, ք. Երեւան Ագաթանգեղոսի 6/1 (5-րդ հարկ) հասցեում: Աճուրդներին մասնակցելու կարգին, ամբողջական ցանկին ծանոթանալու եւ լրացուցիչ տեղեկությունների համար զանգահարել (37410) 565228 կամ այցելել www.borsa.am

## ԿՈՐԵԼ Է

1. «Գյուղատնտեսական կենդանիների հիվանդությունների դեմ պայքարի հանրապետական համաճարակային արշավախումբ» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N282.140.00691) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
2. «Երեւան» ֆիրմային խանութ ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N286.140.01824) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
3. «Ստեփանավանագրոշին» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N37.140.00196) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:
4. «Արեգ» ՊՁ-ի պետական ռեգիստրի վկայականը (գրանցման N37.140.00207) եւ կլոր կնիքը: Համարել անվավեր:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 4.5.2011, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Նոյեան Տապան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: